ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2020 թվականի օգոստոսի 27-ի N 1443-Լ որոշման Հավելված N 2–ով հաստատված Ռազմավարության գործողությունների պլանի՝ 2021 թվականի համար նախատեսված միջոցառումների իրականացման վերաբերյալ

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
1 Ֆինանսական ռեսուրսների հասանելիություն ավելացում					
1.1 **ՓՄՁ Պետական աջակցության գործիքակազմի արդյունավետության և ծածկույթ ընդլայնում**					
1.1.2	Բանկային համակարգի հետ ռիսկերը կիսելու եղանակով ՓՄՁ վարկավորման գործիքի ներդնում	Շահառուների քանակ	ԷՆ	Մայիս 2021	Սույն կետով սահմանված միջոցառման իրականացման նպատակով. Մշակվել և ՀՀ կառավարության կողմից ս.թ. հունվարի 27–ի №106-Լ որոշմամբ հաստատվել է «ՀՀ 2020 թվականի մարտի 26–ի №355-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագծով առաջարկվում է տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների ձեռք բերման հնարավորության ընձեռնում, որը նախադրյալներ կստեղծի տեղական արտադրանքի արտադրության ծավալների ավելացման, միջազգային չափորոշիչներին

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					համապատասխան որակական և անվտանգության պահանջների ապահովման, մրցունակության բարձրացման, արտահանման ծավալների ավելացման, ինչպես նաև ներկրվող արտադրանքը տեղական արտադրությամբ փոխարինելու համար:
1.1.4	Գործող ՓՄՁ-ների նորարարական նախագծերի ֆինանսական աջակցության գործիքի ներդրում	Շահառուների քանակ	ԷՆ,ԿԲ	Ապրիլ 2021	Սույն կետով սահմանված միջոցառման իրականացման նպատակով 1. Միացյալ Թագավորության կառավարության «Լավ կառավարման հիմնադրամի» կողմից ֆինանսավորմամբ և ՎԶԵԲ աջակցությամբ Գործարարության աջակցման գրասենյակի համակարգմամբ մեկնարկել է Տեքստիլ արդյունաբերության աջակցության ծրագիրը, 2. Մշակվել և շրջանառման փուլում է գտնվում «Ստեղծագործ հաբ» հիմնադրամ հիմնադրելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը և հիմնադրամի կանոնադրություն, 3.Գիտելիքահենք տնտեսության զարգացմանը, ձեռներեցության աջակցմանը և տեխնոլոգիաների առևտրայնացմանը և

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					առաջմղմանը նպաստելու նպատակով Էկոնոմիկայի նախարարության կողմից նախաձեռնվել է «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և նրա կանոնադրությունը հաստատելու մասին 23 ապրիլի 2009 թվականի N 454-Ն ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծված «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ կազմակերպություն) վերակազմավորման միջոցով «Նորարարության և ձեռներեցության ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) վերակազմակերպման գործընթացը:
1.1.5	Սկսնակ ձեռնարկատեր ծրագրի իրականացում	Շահառուների քանակ	ԷՆ	Շարունակական	ՓՄՁ ոլորտի ուժեղացման, մրցունակության բարձրացման նպատակով Էկոնոմիկայի նախարարության կողմից շարունակվել են աշխատանքները՝ ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովման, ՓՄՁ սուբյեկտների կարողությունների և ձեռնարկատիրական մշակույթի զարգացման ուղղություններով:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					Այդ աշխատանքների համատեքստում իրականացվել է. -Թվային գիտելիքների բարելավման 11 դասընթաց, որին մասնակցել է 261 հայտատու, -Ձեռնարկատիրական հմտությունների զարգացման 26 դասընթաց, որին մասնակցել են 298 դիմումատուներ, -Պետական 100% երաշխավորություն արտոնյալ վարկի տեսքով ստացել են 76 դիմումատուներ, որոնցից 28-ը կին ձեռնարկատեր:
1.1.6	ՓՄՁ վարկերի պորտֆելի հիման վրա ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկումների խրախուսում, Սփյուռքում դրանց նկատմամբ պահանջարկի հնարավորությունների գնահատում՝ անհրաժեշտության դեպքում մասնավոր ներդրումային ֆոնդերի հետ համագործակցելով:		ԷՆ, ԿԲ	Հունիս 2022	Կետի կատարման ուղղությամբ աշխատանքներն ընթացքի մեջ են:
1.1 .7	Ստեղծել և շահագործել/առաջ մղել հարթակ, որտեղ ներկայացված կլինեն ՓՄՁ ֆինանսավորման	Հարթակի առկայություն	ԷՆ		Բարեփոխվել է «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի (նախկին «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամ)

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
	բոլոր հանրային, ինչպես նաև այլ (դոնոր, ՀԿ) գործիքները և մեխանիզմները			Շահագործումը - շարունակական	կայքէջը և ստեղծվել է հնարավորությունների հարթակ բաժինը, որտեղ ներկայացված է ՓՄՁ–երի համար տրամադրվող դրամաշնորհների, դասընթացների, խորհրդատվության, աքսելերացիայի, ցուցահանդեսներների և այլնի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը՝ https://isc.am/hy/announcement:
1.2 **Անշարժ գույքին այլընտրանքային գրավի կիրառությանը առնչվող օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի զարգացում**					
1.2.1	Ակտիվների հիմքով ֆինանսավորման (ֆակտորինգ, առևտրի ֆինանսավորում) կիրառության համար նպաստավոր միջավայրի (այդ թվում օրենսդրական) խոչընդոտների դուրս բերում		ԷՆ, ԿԲ	Հունիս 2021	Նշվածի մասով աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 16-ի N 1202-Լ որոշմամբ հաստատվել է Կապիտալի շուկայի զարգացման ծրագրի շրջանակներում, որով ներկայացվել է կապիտալի շուկայի զարգացման համապարփակ ռազմավարական ուղղություններն ու գործողությունների ծրագիրը: Այն համախմբում է շուկայի վերլուծության արդյունքում բացահայտված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներն ու գործողությունները, դրանց ակնկալվող արդյունքը, հիմնական պատասխանատու կառույցները և կատարման ժամկետները:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
1.2.2	Մշակել միջոցառումների ծրագիր ակտիվների հիմքով ֆինանսական գործիքների մատչելիության և կիրառելիության բարձրացման համար	Ծրագրի հաստատում	ԷՆ, ԿԲ	Դեկտեմբեր 2021	Նշվածի մասով աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 16-ի N 1202-Լ որոշմամբ հաստատվել է Կապիտալի շուկայի զարգացման ծրագրի շրջանակներում, որով ներկայացվել է կապիտալի շուկայի զարգացման համապարփակ ռազմավարական ուղղություններն ու գործողությունների ծրագիրը: Այն համախմբում է շուկայի վերլուծության արդյունքում բացահայտված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներն ու գործողությունները, դրանց ակնկալվող արդյունքը, հիմնական պատասխանատու կառույցները և կատարման ժամկետները:
1.2.4	Լիզինգային ընկերությունների համար հարկային արտոնության նպատակահարմարության գնահատում		ԷՆ,ԿԲ	Հունիս 2021	Ներկայացված է կետ 1.2.2 կետում
1.3	**Ֆինանսական գրագիտության բարձրացում և թափանցիկ գործարարության մշակույթի զարգացում**				

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
1.3.1	Կրթական և իրազեկման միջոցառումներ	Հաղորդումների, հեռուստաֆիլմերիև հոլովակների պատրաստում	ՀՀ ԿԳՄՍՆ	Շարունակական	ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթության որակի ապահովում» ծրագրի «Ֆինանսական գրագիտության, ձեռնարկատիրական հմտությունների զարգացման, մասնագիտական կրթության վերաբերյալ հեռուստահաղորդաշարերի, սոցիալական հոլովակների և կարճամետրաժ խաղարկային ֆիլմերի պատրաստում» միջոցառման շրջանակում իրականացված դրամաշնորհային մրցույթների արդյունքում հաղթած ընկերությունները նկարահանել են «Սեփական ձեռքերով» (բաղկացած է 8 ֆիլմից) ֆիլմաշարը և «Գործուղի» (բաղկացած 16 հաղորդումից) հեռուստահաղորդումը:
1.3.3	ՖՀՄՍ-ի համապատասխան հաշվետվությունների պատրաստման կարողությունների ձևավորում ինչպես սուբյեկտների, այդպես էլ ԲՋԾ ների մոտ	Իրականացված թրեյնինգների քանակ/թրեյնինգներին մասնակիցների ընդհանուր քանակ	ԷՆ	Շարունակական	Կետով նախատեսված միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2.1.1 կետում նշված իրավական ակտի ընդունումից հետո:
1.3.4	ՓՄՁ շրջանում պատասխանատու թափանցիկ բիզնեսի կազմակերպման և կորպորատիվ կառավարման սկզբունքների	Քաղաքականու-թյան ներկայացում	ԷՆ	Հունիս 2021	ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 16-ի N 1202-Լ որոշմամբ հաստատվել է Կապիտալի շուկայի զարգացման ծրագիրը, որով նախատեսված են մի շարք

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
	կիրառման խրախուսման քաղաքականության մշակում՝ ներառյալ իրազեկումը				գործողություններ (այսուհետ՝ Գործողությունների ծրագիր): Գործողությունների ծրագրի 3.4.5 և 3.4.6 կետերով նախատեսված է համապատասխանաբար «Կորպորատիվ կառավարման կանոնագրքի պարտադիր նորմերի կիրառության ինստիտուցիոնալ մեխանիզմների սահմանում» և «Որոշակի խմբերի դասվող կազմակերպությունների համար մշակել կորպորատիվ կառավարման ներդրման պետական աջակցության ծրագիր»: Միաժամանակ ներկայումս կորպորատիվ կառավարման կանոնագիրքը վերանայման փուլում է: Այս բազմիցս քննարկվել է շահագրգիռ կողմերի հետ, արդյունքում ձևավորվել է կոնսենսուսային տարբերակ, որի ընդունումը, սակայն գործընթացային առումով կպահանջի առնվազն մեկ ամիս ժամանակ, որից հետո նոր հնարավոր կլինի անդրադառնալ վերոնշյալ գործողությունների կատարմանը: Բացի այդ, ընդունված կորպորատիվ կառավարման կանոնագիրքը կրելու է խորհրդատվական բնույթ, և այն պարտադիր դարձնելը որոշակի խմբերի համար

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					կպահանջի մի շարք օրենքներում փոփոխությունների և լրացումների միջոցով կորպորատիվ կառավարման կանոնագրքի որոշակի դրույթների ամրագրում:
1.3 .5	ՓՄՁ գնահատման մեթոդաբանության մշակում (օր. Սքորինգ) և ֆինանսական հաստատությունների կողմից այն կիրառելու կարողությունների ձևավորում		ԷՆ, ԿԲ	Մարտ 2022	Պատերազմով պայմանավորված տնտեսական որոշ գործընթացների և իրականացվող ծրագրերի շարունակականության հետ կապված հարցերը՝ տնտեսական նոր իրողությունների պայմաններում ֆինանսաբյուջետային միջոցների մոբիլիզացման և առաջնայությունների վերաձևակերպման հնարավոր կարիքի առաջացման տեսանկյունից անորոշ էին ինչի պատճառով խաթարվեց որոշ միջոցառումների իրականացման ժամկետները: Նշվածի մասով ներկայումս նախարարության կողմից իրականացվում են աշխատանքներ, միջոցառումների արդիականացման և/կամ ըստ անհրաժեշտության վերաձևակերպման ուղղությամբ՝ հնարավոր ֆորս–մաժորային իրավիճակների առաջացման դեպքերում հաղթահարման բաղադրիչների առկայությունը և ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրին

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					ուղղություններին համապատասխանությունը ապահովելու նպատակով:
1.3.6	Ֆինանսական ոլորտի աշխատակիցների վերապատրաստումներ՝ ՓՄՁ-ների գնահատման կարողությունների զարգացմանն ուղղված	Կազմակերպված թրեյնինգների/ վերապատրաստումների քանակ/մասնա-կիցների ընդհանուր քանակ	ԷՆ	Շարունակական	Պատերազմով պայմանավորված տնտեսական որոշ գործընթացների և իրականացվող ծրագրերի շարունակականության հետ կապված հարցերը՝ տնտեսական նոր իրողությունների պայմաններում ֆինանսաբյուջետային միջոցների մոբիլիզացման և առաջնայությունների վերաձևակերպման հնարավոր կարիքի առաջացման տեսանկյունից անորոշ էին ինչի պատճառով խաթարվեց որոշ միջոցառումների իրականացման ժամկետները: Նշվածի մասով ներկայումս նախարարության կողմից իրականացվում են աշխատանքներ, միջոցառումների արդիականացման և/կամ ըստ անհրաժեշտության վերաձևակերպման ուղղությամբ՝ հնարավոր ֆորս–մաժորային իրավիճակների առաջացման դեպքերում հաղթահարման բաղադրիչների առկայությունը և ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրին

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					ուղղություններին համապատասխանությունը ապահովելու նպատակով:
1.4 **Ֆինանսական շուկայի դիվերսիֆիկացիայի համար բարենպաստ պայմանների ստեղծում՝ ներդրումային/վենչուրային հիմնադրամներ, բիզնես-հրեշտակներ, այլընտրանքային ֆինանսավորման գործիքներ**					
1.4.1	Ուսումնասիրել ներդրումնային ֆոնդերի և բիզնես-հրեշտակների կայացման համար օրենսդրական խոչընդոտները/կազմակերպել քննարկում-հանդիպումներ շահագրգիռ կողմերի հետ	Բազմակողմանի ուսումնասիրու-թյուն	ԷՆ, ԲՏԱՆ, ԿԲ	Դեկտեմբեր 2021	Ոլորտի առաջատար կազմակերպությունների, միությունների և վենչուրային հիմնադրամների ներգրավվածությամբ իրականացվել է հետազոտություն, ինչը թույլ է տվել վերհանել հիմնական օրենսդրական խոչընդոտները և հանդիսացել է օրենսդրական բարեփոխումների փաթեթի մշակման աղբյուր:
1.4.2	Անհրաժեշտության դեպքում մշակել ներդրումնային ֆոնդերի և բիզնես-հրեշտակների կայացմանը նպաստող օրենսդրական բարեփոխումների փաթեթ:	Օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների փաթեթը շրջանառվել է	ԷՆ, ԿԲ	Դեկտեմբեր 2022	Աշխատանքներն ընթացքի մեջ են

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
1.4.3	Կապիտալում մասնակցությամբ զանգվածային ֆինանսավորման (crowdfunding) ենթաօրենսդրական դաշտի ստեղծում, անհրաժեշտության դեպքում օրենսդրական ակտերի մշակում	Ենթաօրենսդրա-կան (անհրաժեշտու-թյան դեպքում օրենսդրական) փաթեթը շրջանառվել է	ԿԲ, ԷՆ	Մարտ 2022	Աշխատանքներն ընթացքի մեջ են
1.4.4	Հանրային գրանտների օրենսդրության բացերի բացահայտում և անհրաժեշտ փոփոխությունների նախաձեռնում		ԷՆ,	Մարտ 2021	Պատերազմով պայմանավորված կատարման ժամկետները խախտվել են: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ միջոցառման կատարման ուղղությամբ:
1.4.5	Այլընտրանքային ֆինանսավորման գործիքների կիրառության վերաբերյալ իրազեկման միջոցառումներ Բիզնեսի աջակցման կառույցների և Ասոցիացիաների միջոցով		ԷՆ	Շարունակելի	Կետի կատարումը իրականացվում է Էկոնոմիկայի նախարարության աշխատանքների համատեքստում
1.4.6	Ֆիզիկական անձանց դրամական փոխանցումները ներդրումների տրանսֆորմացնելու պիլոտային ծրագրի մշակում	Գնահատվել է գործիքի նպատակահար-մարությունը և մշակվել է պիլոտային ծրագիր	ԷՆ, ԿԲ	Սեպտեմբեր 2021	Պատերազմով պայմանավորված կատարման ժամկետները խախտվել են: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ միջոցառման կատարման ուղղությամբ:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
1.4.7	Վենչուրային հիմնադրամների և բիզնես-հրեշտակների հետ շարունակական կապի պահպանում իրենց աշխատանքը ակտիվացնելու նպատակով. այդ թվում՝ բանակցություններ պետության հնարավոր փայամասնակցության վերաբերյալ:	Վենչուրային հիմնադրամների պորտֆել	ԲՏԱՆ, ԷՆ	Շարունակական	Տեղական և օտարերկրյա վենչուրային ֆոնդերի և բիզնես-հրեշտակների հետ շարունակական կապը պահպանվում է, դիտարկվում են համագործակցության հնարավոր տարբերակները:
1.5 **Սնանկության համակարգի բարեփոխում**					
1.5.1	Մասնակցություն գործարար միջավայրի բարելավման ծրագրով սնանկության համակարգի բարեփոխումների համար սահմանված միջոցառումների մշակմանը, իրականացմանը և գնահատմանը և ՓՄՁ ոլորտի պահանջների ներառման ապահովումը նշված ծրագրի մեջ. մասնավորապես արագացված ընթացակարգի առկայությունը և վերակառուցման հնարավորությունների ընդլայնումը	SBA ,Առողջացմամբ ավարտվող վարույթների տեսակարար կշիռը,	ԷՆ	Հունիս 2021	Էկոնոմիկայի նախարարության կողմից ապահովել է գործարար միջավայրի բարելավման ծրագրով սնանկության համակարգի բարեփոխումների համար սահմանված միջոցառումների հետ կապված գործընթացներին

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
1.5.2	Մասնակցություն սնանկության կառավարիչների մոտիվացիոն այնպիսի մեխանիզմների մշակմանը և ներդրմանը, որոնք շահագրգռում են ՓՄՁ սնանկության վարույթը ավարտել ֆինանսական առողջացմամբ:	Արտադատական գործընթացների կշիռը ընդհանուրի մեջ	ԷՆ	Դեկտեմբեր 2022	Էկոնոմիկայի նախարարությունը ապահովում է մասնակցությունու արդարադատության նախարարության կողմից ն
1.5.3	Սնանկության գործընթացին հաջորդող երկրորդ հնարավորության քոուչինգի գործիքի մշակում (Հասարակական կազմակերպությունների հետ համատեղ)	Մշակված Գործիք	ԷՆ	Դեկտեմբեր 2021	Պատերազմով պայմանավորված կատարման ժամկետները խախտվել են: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ միջոցառման կատարման ուղղությամբ:
2 ՓՄՁ սուբյեկտների կարողությունների զարգացում և ձեռնարկատիրական մշակույթի խթանում					
2.1 **Նորարարության ներդնումը և կիրառումը թիրախավորող աջակցության գործիքակազմի մշակում և ներդնում պետական աջակցության կառույցների միջոցով**					
2.1.1	Միասնական օգտագործման տեխնոլոգիական կենտրոնների պիլոտ ծրագրի իրականացում	Մշակվել է կենսունակ ծրագիր	ԷՆ	Հուլիս 2021	ՀՀ կառավարությունը, կարևորություն տալով գիտելիքահենք տնտեսության զարգացմանը, ձեռներեցության աջակցմանը և տեխնոլոգիաների առևտրայնացմանը և առաջմղմանը նպատակ ունի «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					նրա կանոնադրությունը հաստատելու մասին 23 ապրիլի 2009 թվականի N 454-Ն ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծված «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ կազմակերպություն) վերակազմավորման միջոցով վերակազմակերպել «Նորարարության և ձեռներեցության ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ): Վերակազմավորման գործընթացից հետո կստեղծվի բազմաֆունկցիոնալ կենտրոն բիզնեսին խորհրդատվություն, տեղեկատվություն և աջակցություն տրամադրելու համար: Այս միջոցառումներն ուղղված կլինեն Հայաստանի Հանրապետությունում բիզնեսի էկոհամակարգի ստեղծմանն ու զարգացմանը, որն էլ իր հերթին կնպաստի ձեռնարկատիրության խթանմանը, ոլորտում խոչընդոտների վերացմանը և բիզնես գործընթացների պարզեցմանը: Այն կդառնա մասնագիտական սպասարկման կենտրոն (ապահովված թվային հավելվածով) պետական ծառայություններին աջակցելու

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					համար: Նաև կնվազեցվեն պետական մարմինների և բիզնեսի միջև առկա խոչընդոտները, քանի որ ծառայությունների մատուցման որոշ մասը լինելու է առցանց: Յուրաքանչյուր մարզում նախատեսվում է ստեղծել և վերազինել «Նորարարության և ձեռներեցության ազգային կենտրոն»: Կենտրոնում կլինեն բիզնես խորհրդատվական ծառայություններ, կլինեն տեխնոլոգիաների տրանսֆերի գրասենյակներ, կանցկացվեն բիզնես ինկուբացիոն ծրագրեր, վերապատրաստումներ, կլինեն նորաստեղծ կամ փոքր ընկերությունների համար հարմարավետ գրասենյակային վարձակալման պայմաններ: Կենտրոնի մասնաճյուղերը կնպաստեն մարզերում ոչ գյուղատնտեսական նոր աշխատատեղերի ստեղծմանը:
2.1.2	Տեխնոլոգիական խորհրդատվության և աուդիտի (այդ թվում միջազգային փորձագետների միջոցով) ծրագրի մշակում և ներդնում	Շահառուների քանակ	ԷՆ	Շարունակական	Կետով նախատեսված միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2.1.1 կետում նշված իրավական ակտի ընդունումից հետո:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
2.1.3	Տեխնոլոգիական նորարարության կիրառությունը խթանող ՓՄՁ-ների հարկային արտոնության կոնցեպտի մշակում և քննարկում	Մշակվել է հարկային քաղաքականու-թյան փոփոխության կոնցեպտ	ԷՆ	Հուլիս 2021	Մշակվել է իրավական լուծումների փաթեթ՝ նորարարության կիրառությունը խթանող ՓՄՁ-ների հարկային արտոնության կոնցեպտ, որը գտնվում է քննարկման փուլում: Նախագծով առաջարկվող լուծումների կիրառումը թույլ կտա. • Խթանել ՀՀ տարածքում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական գործունեության իրականացումը՝ փոխհատուցելով դրա նպատակով ձեռք բերված սարքավորումների, հումքի, նյութերի 40%-ը պետական բյուջեի միջոցներից: • ՀՀ տարածքում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից ներգրավված բարձր որակավորում ունեցող մասնագետներին փաստացի վճարված աշխատավարձերի 20-70%-ը (կախված որակավորումից և կրթական պրոցեսներին ներգրավվածությունից) փոխհատուցել պետական բյուջեի միջոցներից:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					Որպես բարձր որակավորման չափանիշներ են ընտրվել աշխարհի լավագույն 400 ԲՈՒՀ-երից ստացած որակավորման կամ գիտական աստիճանը կամ ԷՍ էնդ ՓԻ 500 (S&P 500), FTSE 100, Nikkei 225 ինդեքսներում ներառված ընկերություններում նվազագույնը 10 տարվա աշխատանքային փորձը:
2.1.4	ՓՄՁ-ներում Նորարարական և կապի տեխնոլոգիաների (ICT) կիրառման խրախուսման ծրագրի մշակում	Մշակվել է ծրագիր	ԷՆ, ԲՏԱՆ	Մայիս 2021	ՓՄՁ-ներում Նորարարական և կապի տեխնոլոգիաների (ICT) կիրառման խրախուսման ծրագրեր չեն իրականացվել: Կետով նախատեսված միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2.1.1 կետում նշված իրավական ակտի ընդունումից հետո:
2.1.5	ՓՄՁ-ներում Նորարարական և կապի տեխնոլոգիաների (ICT) կիրառման խրախուսման ծրագրի իրականացում	Շահառուների քանակ	ԷՆ, ԲՏԱՆ	Դեկտեմբեր 2021	ՓՄՁ-ներում Նորարարական և կապի տեխնոլոգիաների (ICT) կիրառման խրախուսման ծրագրեր չեն իրականացվել: Կետով նախատեսված միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2.1.1 կետում նշված իրավական ակտի ընդունումից հետո:
2.1.6	"Կանաչ" տեխնոլոգիաների կիրառման աջակցության առկա գործիքների քարտեզագրում և խթանում ձեռնարկությունների շրջանում	Առկա աջակցության ծրագրերի շահառուների ավելացում	ԷՆ, ՇՄՆ	Սեպտեմբեր 2021	Հայաստանում կանաչ տնտեսությունը համարվում է աճի նոր շարժիչ: ՀՀ Կառավարությունը ևս ձգտում է ապահովել, որ տնտեսությունը համապատասխանի բնապահպանական չափանիշներին, որպեսզի մնա կայուն, ճկուն և ապահով: Այս

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					համատեքստում Էկոնոմիկայի նախարարության հետ համագործակցությամբ, Միացյալ Թագավորության կառավարության «Լավ կառավարման հիմնադրամի» ֆինանսավորմամբ, ՎԶԵԲ աջակցությամբ և Գործարարության աջակցման գրասենյակի համակարգմամբ մեկնարկել է «Կանաչ աճը Հայաստանում ՓՄՁ-ների համար» ծրագիրը: Ծրագրի ընդհանուր նպատակն է բարձրացնել Հայաստանի ՓՄՁ-ների մրցունակությունը՝ բացահայտելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և ավելի լավ կառավարել բնապահպանական ռիսկերը՝ աջակցելով Հայաստանի բնական կապիտալի և շրջակա միջավայրի պահպանմանը: Արդյունքում ակնկալվում է մշակել ՓՄՁ-ների համար գործողությունների ծրագիր, որի կիրարկումը հնարավորություն կտա պահպանել Հայաստանի բնական կապիտալը և բարձրացնել մարդկանց բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրի հետ կապված գործողություններին, ցուցադրելով և

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					բացելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և շրջակա միջավայրի վրա ռիսկերն ու ազդեցությունները ավելի լավ կառավարելու մեխանիզմների ստեղծմամբ՝ այդպիսով Հայաստանի ՓՄՁ-ները դարձնելով ավելի մրցունակ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել կանաչ աճի հնարավոր մեխանիզմների և սկզբունքների վերաբերյալ հետազոտություն, ներառյալ գենդերային հավասարության սկզբունքի կիրառմամբ, որը կարող է ներառվել Հայաստանում ՓՄՁ-ների կողմից իրականացվող բիզնես գործունեության մեջ: Նախատեսվում է նաև իրականացնել Հայաստանում ՓՄՁ-ներում կանաչ տնտեսության սկզբունքների ինտեգրման հիմնախնդիրների մանրակրկիտ վերլուծություն: Նախատեսվում են նաև առաջարկություններ ճանապարհային քարտեզի վերաբերյալ, թե ինչպես իրականացնել կանաչ աճի մեխանիզմների և սկզբունքների ինտեգրումը և կանաչ ֆինանսների հասանելիությունը Հայաստանում ՓՄՁ-ների շրջանում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					-Բացահայտել և քարտեզագրել Հայաստանի ՓՄՁ-ների համար գոյություն ունեցող կանաչ ֆինանսավորման գործիքները - Հայաստանի ՓՄՁ-ների կանաչ աճի ինտեգրման համար ճանապարհային քարտեզ և գործողությունների պլանի մշակում, ներառյալ գենդերային հավասարության ապահովմանն ուղղված քայլերը: -Հայաստանի ՓՄՁ-ների համար առաջարկությունների ներդրում՝ իրենց բիզնես գործունեության մեջ կանաչ աճի մեխանիզմների կառուցվածքային ինտեգրման վերաբերյալ: -Հայաստանի յուրաքանչյուր մարզում դասընթացների անցկացում, որոնք ունեն աճի ամենաբարձր հնարավորությունները, եթե կանաչ աճի մեխանիզմները ինտեգրվեն իրենց բիզնես գործունեության մեջ. Ծրագրի շրջանակներում մարտ ամսից կմեկնարկեն դասընթացներ մարզային 50 ՓՄՁ ներկայացուցիչների համար: Ծրագրի ազդեցությունը չափելի կդառնա Հայաստանում ՓՄՁ-ների համար գործողությունների ծրագիր մշակմամբ, որն

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					ուղղված կլինի բացահայտելու և բացելու ավելի կանաչ աճի հնարավորությունները՝ կլիմայի հետ կապված ռիսկերի ավելի լավ կառավարման, կանաչ անցումային հնարավորությունների և կանաչ ֆինանսավորման ներդրման միջոցով: Ընդհանուր առմամբ, ծրագիրը կնպաստի Հայաստանի ՓՄՁ-ների իրազեկվածության բարձրացմանը կանաչ անցման ռիսկերի և հնարավորությունների մասին և կներառի կանաչ տնտեսական անցումը պետական քաղաքականության ավելի լայն օրակարգում: Մշակվել է կանաչ և կայուն տնտեսական զարգացման ռազմավարության մշակման տեխնիկական առաջադրանքի նախագիծը: Վերջինս աշխատանքային կարգով շրջանառվել է համապատասխան շահագրգիռ կառույցների միջև և ներկայումս գտնվում է վերջնականացման փուլում: Ընթացիկ փուլում են գտնվում նախնական ուսումնասիրությունները բնական ռեսուրսների տնտեսական կենսացիկլերի վերաբերյալ, որպեսզի բացահայտվեն հայեցակարգի և ճանապարհային քարտեզի

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					մեջ առանձնակի ուշադրության արժանի դրույթներն ու առանձնահատկությունները: Շրջակա միջավայրի նախարարության համակարգման ներքո ԵՄ-ի ֆինանսավորմամբ իրականացվում է «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիրը՝ 2019-2022թվականների համար, որի նպատակն է Հայաստանում իրականացնել ռեսուրսների արդյունավետ և ավելի մաքուր արտադրության (ՌԱՄԱ) կիրառման աջակցության գործողություններ և խորհրդատվական ծառայություններ՝ աջակցելով բնապահպանական նախաձեռնություններին, ցուցադրելով և բացահայտելով ավելի կանաչ զարգացման հնարավորությունները և ռիսկերը, ստեղծելով դրանց ազդեցություններն ավելի լավ կառավարելու մեխանիզմներ: Հայաստանում նախատեսվել է տրամադրել 25 ՓՄՁ-ներին և կանանց կողմից ղեկավարվող բիզնես ընկերություններին ռեսուրսների/ էներգիայի արդյունավետ օգտագործման և ավելի մաքուր արտադրության կազմակերպման ոլորտում խորհրդատվական ծառայություններ:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					Ծրագրի շրջանակներում Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ) շրջանում էկոլոգիապես մաքուր արտադրության խթանման արդյունքում պլաստիկի և ձկնարտադրության ոլորտների 14 ՓՄՁ-ներ իրենց գործունեության մեջ ներդրում են էկոլոգիապես մաքուր արտադրական գործընթացներ՝ նպաստելով Ռեսուրսների արդյունավետության և մաքուր արտադրության (ՌԱՄԱ) ցուցանիշների բարելավմանը: Իրականացվել է • ՌԱՄԱ միջոցառումների իրականացման մոնիթորինգ. • Արդյունաբերության ոլորտում ՌԱՄԱ ցուցանիշների գնահատման թեմայով դասընթացներ. • ՌԱՄԱ-ի շրջանակներում էներգետիկ կառավարման համակարգի թեմայով վերապատրաստում. • Կանաչ արտադրության զարգացման մեջ գենդերային բաղադրիչի ընդգրկում թեմայով. դասընթաց:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
2.2 ՓՄՁ ոլորտում գործող հանրային կառույցների և բիզնեսի զարգացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում՝ ՓՄՁ-ում կարողությունների բացը լրացնելու ուղղությամբ					
2.2.1	Ներդնել Բիզնես Աջակցության ծառայություններ մատուցող կազմակերպությունների և Բիզնես Ասոցիացիների հետ համագործակցության պլատֆորմ, ներառյալ որակի հսկողության մեխանիզմ	Փոխշահավետ պլատֆորմ	ԷՆ	Մարտ 2022	Պատերազմով պայմանավորված կատարման ժամկետները խախտվել են: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ միջոցառման կատարման ուղղությամբ:
2.2.2	Դասընթացավարների վերապատրաստում միջազգային փորձագետների կողմից		ԷՆ	Սեպտեմբեր 2021	Պատերազմով պայմանավորված կատարման ժամկետները խախտվել են: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ միջոցառման կատարման ուղղությամբ:
2.2.3	Մշակել և գործարկել խորհրդատուների և մենթորների հարթակ, տեղական և միջազգային փորձագետների, սփյուռքի ներկայացուցիչների, հաջողակ գործարարների կողմից	Հարթակի գործարկում, ներգրավված մենթորների և խորհրդատուների թիվ	ԷՆ	Հունիս 2021	Պատերազմով պայմանավորված կատարման ժամկետները խախտվել են: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ միջոցառման կատարման ուղղությամբ:
2.2.4	Առցանց դասընթացի գործիքի մշակում		ԷՆ	Մարտ 2021	Միջոցառման իրականացման նպատակով մշակվել է «Տնտեսության զարգացմանն աջակցող գիտելիքների և հմտությունների զանգվածային վերազինում՝ աշխարհի

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					առաջատար բուհերի և միջազգային կազմակերպությունների առաջադեմ դասընթացների միջոցով» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: Նախագծով առաջարկվում է աշխատաշուկայում առկա և ապագա մասնագետների որակավորման բարձրացման, երիտասարդների գործազրկության մակարդակի նվազեցման և ապագայում կանխատեսվող աշխատանքային պահանջներին համապատասխան գիտելիքների և հմտությունների զարգացման նպատակով՝ միջազգային ճանաչում և փորձ ունեցող կրթական առցանց հարթակի կիրառմամբ համաշխարհային առաջադեմ գիտելիքի հասանելիության զանգվածային ապահովում: Ծրագրի նպատակն է զանգվածայնորեն բարելավել հմտությունների և առաջադեմ գիտելիքի մակարդակը Հայաստանում, բարձրացնել աշխատուժի մասնակցության մակարդակն ու աշխատուժի համապատասխանությունը տնտեսության ներկա և ապագա պահանջներին, ավելացնել առաջատար և զարգացող

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					մասնագիտությունների գծով մրցունակ մասնագետների թիվը, նվազեցնել գործազրկության մակարդակը և ընձեռել աշխատելու ավելի մեծ հնարավորություններ, նպաստել ցկյանս կրթության մշակույթի ձևավորմանն ու ամրապնդմանը, բարձրագույն կրթական հաստատությունների կարողությունների ավելացմանը, հայոց լեզվով հասանելի դարձնել մեծածավալ համաշխարհային առաջադեմ գիտելիք և փորձ, բարելավել հանրային ծառայության և հանրային կառավարման որակը, խթանել հայրենադարձությունը, նպաստել ներդրումների ծավալի և տնտեսության արտադրողականության աճին՝ ապահովելով հարաճուն տնտեսական աճի համար անհրաժեշտ նախադրյալներ և տնտեսության մեջ ստեղծելով բազմապատիկ ներգործություն: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է շուրջ 114 500 սովորողի՝ առնվազն 3 ամսով դասընթացների ամբողջական հասանելիության տրամադրում:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					Բացի այս քանակական արդյունքից, ծրագրի հաջող իրագործման դեպքում ենթադրվում է բազում այլ որակական փոփոխություններ, որոնց թվում են, մասնավորապես՝ -մեծածավալ համաշխարհային առաջադեմ գիտելիքի՝ հայոց լեզվով հասանելիություն, -տնտեսության արտադրողականության աճ, -աշխատաշուկայի պահանջներին ավելի համապատասխան և մրցունակ աշխատուժ, -գործազրկության մակարդակի նվազում և աշխատուժի մասնակցության մակարդակի աճ, -կազմակերպություններում աշխատակիցների, ներառյալ ղեկավար կազմի արտահոսքի մակարդակի նվազում և համապատասխան ծախսերի խնայում, -ապագայի մարտահրավերներին առավել դիմակայուն տնտեսություն, -ներդրումային ավելի գրավիչ միջավայր, -արժանիքահեն առաջխաղացման մշակույթի ամրապնդում, -սեփական շարունակական զարգացման մշակույթի ամրապնդում, -բարձրագույն կրթական համակարգի կարողությունների և մրցունակության աճ,

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					-պետական և տեղական կառավարման որակի աճ, -հայրենադարձության ծավալների աճ, -անգլերեն լեզվին տիրապետողների և անգլերեն լեզվի իմացության մակարդակի աճ, -էլ-ուսուցման հնարավորությունների օգտվողների և դասընթացներն ավարտողների ցուցանիշների զանգվածային աճ, -ՏՀՏ հմտություններին և թվային գրագիտության ավելի բարձր մակարդակ:
2.2.5	Ձեռնակատերերի որակավորման հավաստագրման մեխանիզմի մշակում և ներդրում		ԷՆ	Հունիս 2021	Պատերազմով պայմանավորված կատարման ժամկետները խախտվել են: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ միջոցառման կատարման ուղղությամբ:
2.3 Ձեռնարկատերերի և ՓՄՁ-ում զբաղվածների որակավորման բարձրացմանն ուղղված միջավայրի կայացում					
2.3.1	Ձեռնարկատիրական հմտությունների կրթական ծրագրի մշակում		ԷՆ և ԿԳՄՍՆ	Հունիս 2021	ԿԳՄՍ նախարարի հրամաններով հաստատվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների 6-րդ և 7-րդ դասարանների «Ձեռնարկատիրական կրթության բաղադրիչի ինտեգրմամբ «Տեխնոլոգիա»» առարկայի չափորոշիչները, ծրագրերը և ուսուցչի ձեռնարկները

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					(14.08.2020թ. 1038-Ա/2 և 11.12.2020թ 1753-Ա/2 հրամաններ):
2.3.2	Աշխատուժի կարողությունների գնահատում և բացերի վերհանում, վերապատրաստման կարիքների գնահատում		SDG lab, ԷՆ	2022	Աշխատանքներն ընթացքի մեջ են:
2.3.3	Կրթական/վերապատրաստման ծրագրերի կազմում համաձայն կարիքների գնահատման արդյունքների		SDG lab, ԿԳՄՍՆ, ԷՆ	2022	2021 թվականին ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններով հաստատված ծրագրերով վերապատրաստվել են «Ձեռնարկատիրական կրթության բաղադրիչի ինտեգրմամբ «Տեխնոլոգիա»» առարկան 6-րդ դասարաններում դասավանդող 2131 ուսուցիչ, իսկ «Ձեռնարկատիրական կրթություն» առարկան ավագ դպրոցի 10-րդ և 11-րդ դասարաններում դասավանդող 448 ուսուցիչ:
2.3.4	ՄԿՈՒ կրթական ծրագրերի մշակման գործընթացում մասնավոր հատվածի հետ քննարկումների կազմակերպում		SDG lab, ԿԳՄՍՆ, ԷՆ	2022	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող աշխատանքային խմբերում պարտադիր կերպով ընդգրկվում են 1-2 մասնավոր հատվածի ներկայացուցիչներ: 2020 թվականին մշակվել է 12 պետական կրթական չափորոշիչ:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
2.3.5	Հասանելի, ոչ ֆորմալ կրթության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում ՓՄՁ շրջանում, օնլայն հարթակների միջոցով		ԷՆ	Շարունակական	Էկոնոմիկայի նախարարության կողմից սույն կետի կատարման նպատակով նշյալ գործընթացը լուսաբանումը շարունակաբար իրականացվում է և նախարարության պաշտոնական կայքջով, և՛ ԶԼՄ-ներով:
2.3.6	Պետական աջակցության կառույցների թրեյնինգային ծրագրերի արդիականացում և մոտեցումների վերանայում	Թրեյնինգային ծրագիր	ԷՆ	Մարտ 2021	Թրեյնինգային ծրագրերը և մոտեցումները արդիականացվել են՝ GIZ– ի և Գործարարության աջակցման գրասենյակի աջակցությամբ:
2.3.7	Առցանց հայալեզու ուսուցողական գործիքների մշակում և տարածում	Ուսուցողական նյութերի քանակ	ԷՆ	Շարունակական	
2.3.8	Մշակել արտադրական տարբեր ոլորտների համար մատչելի գործարար ուղեցույցներ և մոդելներ դրանք հասանելի դարձնել օնլայն տիրույթում	Ուղեցույցների քանակ	ԷՆ	Դեկտեմբեր 2021	Համապատասխան մշակված նյութերը տեղադրված են Էկոնոմիկայի նախարարության կայքում հետևյալ հղումով՝ https://mineconomy.am/page/1619
2.3.9	Մշակել ՓՄՁ աշխատակիցների մասնագիտական կարողությունների վերապատրաստումների համաֆինանսավորման ծրագիր	Ծրագիրը հաստատված է	ԷՆ	Սեպտեմբեր 2021	Պատերազմով պայմանավորված կատարման ժամկետները խախտվել են: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ միջոցառման կատարման ուղղությամբ:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
2.3.10	Ներդնել ՓՄՁ աշխատակիցների մասնագիտական կարողությունների վերապատրաստումների համաֆինանսավորման ծրագիր	Շահառուների քանակ	ԷՆ	Մարտ 2022	Պատերազմով պայմանավորված կատարման ժամկետները խախտվել են: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ միջոցառման կատարման ուղղությամբ:
2.3.11	Մենթորշիփներ, փորձի փոխանակման թրեյնինգներ ՀՀ բոլոր մարզերում	Թրեյնինգների ու մենթորշիփների թիվ	ԷՆ	Դեկտեմբեր 2022	Ներկայումս իրականացվում են աշխատանքներ միջոցառման կատարման ուղղությամբ:
2.4 ՓՄՁ-ի կողմից գիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների և տեխնոլոգիական լուծումների նկատմամբ պահանջարկի խրախուսման ծրագրի մշակում և իրագործում					

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
2.4.1	ՓՄՁ-ների և ակադեմիական համայնքի (համալսարաններ, ինչպես նաև R&D հաստատություններ) միջև համագործակցության խթանման մեխանիզմի մշակում (սուբսիդավորում կամ տեխնիկական աջակցություն)	Համագործակցության ծրագրերի քանակ	ԿԳՄՍՆ, ԲՏԱՆ և ԷՆ	Մարտ 2021	ՀՊՏՀ-ի Change Lab բիզնես աքսելերատորի կողմից ՀՀ ԲՏԱՆ կողմից հայտարարված դրամաշնորհային մրցույթի շրջանակում աքսելերատորի կողմից խորհրդատվական և կրթական բնույթի ծրագիր է մշակվել և իրականացվել սկսնակ տեխնոլոգիական ընկերությունների համար:
2.4.2	ՓՄՁ-ների ՏՏ և թվային վերափոխման ծրագրերի տեխնիկական աջակցություն (համաֆինանսավորում) պետական աջակցության կառույցների միջոցով	Թվային լուծումների անցած ՓՄՁ-ների թիվ	ԲՏԱՆ և ԷՆ	Շարունակական	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ՓՄՁ-ների թվային վերափոխման ծրագրեր մինչ այժմ չեն իրականացվել: Նախատեսվում է 2023 թվականին ՀՀ պետական տվյալների պահոցի շահագործումից հետո ՓՄՁ-ների թվային լուծումների օգտագործումը խրախուսելու նպատակով պետական ամպային հարթակի վրա տրամադրել SaaS տիպային ավտոմատացված լուծումներ և թվային գործիքներ: Տվյալների ազգային պահոցի վիրտուալ ենթակառուցվածքում նախատեսվում է իրականացնել ՓՄՁ-ների համար տվյալների միասնական չափանիշներով պահպանման, մշակման և փոխանցման գործընթացներ: Մի շարք ծրագրեր՝ (Ինքնության նույնականացում,

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					վավերացում և էլ. Ստորագրություն, Օրենսդրական դաշտի ուսումնասիրություն և փոփոխություն, Լայնաշերտ ինտերնետի և թվային ծառայությունների հասանելիության զարգացման պլանի մշակում, Տեխնիկական պահանջների միջազգային ստանդարտների տեղայնացում) իրականացվում են ուղղված լինելով ՓՄՁ բիզնես գործընթացների արագացմանը և կատարելագործմանը:
2.4.3	Մասնագետների վերապատրաստում ՓՄՁ-ներին թվային տեխնոլոգիաների ներդրման և կիրառման ուսուցման նպատակով	Վերապատրաստ-ված ՓՄՁ-ների/մասնագետ-ների թիվ	ԷՆ,	Սեպտեմբեր 2021	ՀՊՏՀ-ի Change Lab բիզնես աքսելերատորի կողմից ՀՀ ԲՏԱՆ կողմից հայտարարված դրամաշնորհային մրցույթի շրջանակում աքսելերատորի կողմից խորհրդատվական և կրթական բնույթի ծրագիր է մշակվել և իրականացվել սկսնակ տեխնոլոգիական ընկերությունների համար:
2.5 Ձեռնարկատիրական մշակույթի զարգացում					

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
2.5.1	Կրթական համակարգի բոլոր օղակներում ձեռնարկատիրության էլեմենտների/առարկաների ուսուցման ծրագրերի մշակում	Ծրագրերի քանակ	ԿԳՄՍՆ, ԿԲ, ԷՆ	Դեկտեմբեր 2022	Հանրակրթության պետական չափորոշչով միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակությունները և հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներով ամրագրված են այնպիսի գիտելիքներ, հմտություններ, ինչպիսիք են՝ ճանաչի, նկարագրի ձեռնարկատիրական գործունեության տեսակներ, թվարկի բիզնես և աշխատանքային էթիկայի հիմնական նորմերը, բացատրի դրանց պահպանման անհրաժեշտությունը հաջողված ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար: Վերջնարդյունքները ապահովելու նպատակով մշակվել են առարկայական չափորոշիչներ և ծրագրեր, որոնցում ինտեգրված բաղադրիչներ են ֆինանսական և ձեռնարկատիրական կրթությունը: 2021-2022 ուստարում ծրագրերը փորձարկվում են Տավուշի մարզի 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					Առարկաների ծրագրերը կազմվում են ըստ իրականացվող հանրակրթական հիմնական ծրագրերի ուղղվածության՝ պահպանելով Չափորոշչի պահանջները: Առարկայի ծրագրերի հիման վրա սահմանված կարգով մշակվում են թեմատիկ և անհատական ուսուցման պլաններ, ստեղծվում են դասագրքեր, ուսուցչի ձեռնարկներ և այլ ուսումնական նյութեր: Կարևորելով երիտասարդների մոտ ձեռնարկատիրական մտածողության, ձեռներեցության կարողությունների զարգացումը, ստեղծագործական և նորարարական հմտությունների խթանումը՝ վերանայվող և նոր մշակվող չափորոշիչներում, ինչպես նաև ՆՄՄԿՈՒ բոլոր հաստատությունների ուսումնական պլաններում 2017-2018 թվականներից սկսված ներառվել և ուսուցանվում է «Ձեռներեցություն» մոդուլը: ՄԿՈՒ պետական կրթական չափորոշիչներում ընդգրկված «Ձեռներեցություն» մոդուլի համար մշակվել է երեք ձեռնարկ՝ ուսումնական և մանկավարժների ու սովորողների համար:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					«Ձեռներեցություն» մոդուլը դասավանդող 25 մանկավարժներ անցել են դասընթացավարների վերապատրաստում, որոնցից 1-ին փուլում 11 դասընթացավար ստացել են դասընթացավարների վերապատրատում իրականացնելու հավաստագիր: 2019-2022 թվականներին վերապատրաստումներ են կազմակերպվել «Ձեռներեցություն» մոդուլի շուրջ 290 դասընթացավարների համար, ներառյալ՝ «Ձեռներեցություն» մոդուլի առցանց ուսուցման գործիքակազմով իրականացման համար: 2020թ. Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) հետ համագործակցության շրջանակում ստեղծված http://elearning.am/login/index.php?lang=hy էլեկտրոնային հարթակում կազմակերպվել են «Ձեռներեցություն» մոդուլի վերաբերյալ առցանց դասընթացներ: Ներկայումս ՀՀ բոլոր նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդումն իրականացվում է մշակված մոդուլի ու

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					ձեռնարկների կիրառմամբ՝ վերապատրաստված մանկավարժների կողմից:
2.5.2	ԲՈՒՀ-երի ոչ տնտեսագիտական/կառավարման ֆակուլտետներում "Բիզնեսի հիմունքների" լրացուցիչ ընտրովի դասընթացի ներդնում	Մշակված և ներդրված դասընթացներ	ԿԳՄՍՆ, ԷՆ	Դեկտեմբեր 2022	Կետի կատարումը իրականացվում է ԿԳՄՍ նախարարության աշխատանքների համատեքստում:
2.5.3	Դպրոցական և ուսանողական ճամբարների անցկացում	Ճամբար	ԿԳՄՍՆ, ԷՆ	Շարունակական	ՀՀ կառավարության 08.07.2021թ N 1126-Ն որոշման հիման վրա 2 հերթափոխով (յուրաքանչյուր հերթափոխի տևողությունը 20 օր) զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և աշխարհազորայինների, ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան թվով 3200 երեխաների համար կազմակերպվել և իրականացվել է ամառային հանգիստ: 11-րդ դասարաններում սովորող դպրոցականների մոտ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից ստացած գիտելիքների հարստացման և դրանց համապատասխան

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					կարողությունների և հմտությունների զարգացման նպատակով 2021 թվականին թվով 95 դպրոցականների համար կազմակերպվել է ռազմամարզական ճամբար:
2.5.5	Համագործակցություն ԲՈՒՀ-երի բիզնես-ինկուբատորների հետ՝ տեխնիկական և ֆինանսական օժանդակության հնարավորությունները դուրս բերելու նպատակով		ԿԳՄՍՆ, ԲՏԱՆ և ԷՆ	Շարունակական	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում առաջիկայում նախատեսվում է ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում 4 տեխնոլոգիական լաբորատորիայի բացում՝ դոնոր կազմակերպության հովանավորությամբ:
2.5.6	Ամենամյա նորարար և հաջողակ ձեռնարկատերերի մրցանակաբաշխության անցկացում		ԷՆ	Տարեկան	Պատերազմով պայմանավորված կատարման ժամկետները խախտվել են: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ միջոցառման կատարման ուղղությամբ:
2.5.7	Թիրախային կրթական ծրագրերի իրականացում կանանց, երիտասարդների և հայրենադարձների համար	Ծրագրերի քանակ	ԷՆ	Շարունակական	Կետի կատարումը իրականացվում է Էկոնոմիկայի նախարարության աշխատանքների համատեքստում
2.6 **Սոցիալական ձեռնարկատիրության տեսանելիության բարձրացում**					

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
2.6.2	Հաղորդակցման հասանելի հարթակներով ներկայացնել ՍՁ հաջողակ պատմություններ, դրա հիմքում ընկած գաղափարախոսությամբ	Պատրաստված և հեռուստատե-սությամբ թողարկված տեսանյութեր	ԱՍՀՆ, ԷՆ	Շարունակական	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սույն կետի կատարման նպատակով նշյալ գործընթացը լուսաբանվել է և՛ նախարարության պաշտոնական կայքջով, և՛ ՁԼՄ-ներով:
2.6.3	Իրականացնել ՍՁ ձեռնարկատիրական հմտությունների զարգացման ծրագիր	Ծրագրերի քանակ	ԷՆ	Շարունակական	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն Արցախի Հանրապետության կառավարության հետ՝ «Սոցիալական Ձեռներեցների դպրոց»-ի և Գավառի պետական համալսարանի «Յունուս կենտրոն»-ի միջոցով 2021 թվականի օգոստոսի 28-ից Արցախի Հանրապետությունում անցկացվել է Սոցիալական ձեռնարկատիրական շաբաթ: Ծրագրի շրջանակում «Սոցիալական ձեռնարկատիրությունը՝ որպես Արցախի համայնքային զարգացման նոր բիզնես մոդել» խորագրով դասընթացներ են իրականացվել ինչպես մասնակիցների անմիջակն ներկայությամբ, այնպես էլ առցանց ձևաչափով: Դասընթացների արդյունքում մասնակիցները ձեռք են բերել նոր հմտություններ, իսկ սոցիալական ձեռնարկատիրական լավագույն բիզնես գաղափարները՝ ֆինանսավորում:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
3 ՓՄՁ սուբյեկտների համար շուկաների հասանելիության ապահովում					
3.1	**ՓՄՁ-ներին նոր շուկաներ մուտք գործելիս շարունակական աջակցություն**				
3.1.1	Իրականացնել ՓՄՁ-ների իրազեկության մակարդակի բարձրացման միջոցառումներ ԵԱՏՄ, GSP+, REX համակարգերի, ինչպես նաև մաքսային ընթացակարգերի լավագույն կիրառման վերաբերյալ	Համակարգերի օգտվող արտահանող ՓՄՁ-ների թիվ	ԷՆ	Շարունակական	ԵԱՏՄ, GSP+, REX համակարգերի, ինչպես նաև մաքսային ընթացակարգերի լավագույն կիրառման վերաբերյալ , ինչպես նաև «Գրանցված արտահանողների համակարգում» (REX) հայտի լրացումը նկարագրող հայալեզու տեսաուղեցույցը տեղադրված է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայք էջում՝ https://mineconomy.am/page/791 հղումով: Միաժամանակ, էկոնոմիկայի նախարարության կայք–էջում https://mineconomy.am/page/1973?fbclid=IwAR0IsIKMNN39ZKDsJbLmG8DgXE5qhx7AGeDJtS88EiCyPihkU_bQ-OShkNk հղումով տեղեկացվել է, որ ԵՄ երկրներ արտահանող կազմակերպությունների համար իր գիտություն տեղեկացնում ենք, որ 2022 թ. հունվարի 1-ից Հայաստանը չի օգտվելու «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմից:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
3.1.4	Արտահանման առավել մեծ ներուժ ունեցող ոլորտների ՓՄՁ-ի հետ իրականացնել իրազեկման թիրախային և ավելի մանրակրկիտ աշխատանքներ	Կազմակերպված քննարկումների թիվ/քննարկում-ներին ներգրավված ՓՄՁ-ների թիվ	ԷՆ	Շարունակական	Կետի կատարումը իրականացվում է Էկոնոմիկայի նախարարության աշխատանքների համատեքստում
3.1.5	Որակի հավաստագրերի տրամադրման գործընթացի վերլուծություն և արդյունքների հիման վրա բարեփոխումների իրականացում միտված գործընթացի պարզեցմանը		ԷՆ	Հունիս 2021	Որակի ենթակառուցվածքի ոլորտի բաղկացուցիչ մասերի՝ հավատարմագրման, տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման, չափումների միասնականության ապահովման և ստանդարտացման, ՍԱՏՄ և ՇՎՏՄ ոլորտների բարեփոխման ռազմավարությունների կազմման և իրագործման, այդ թվում ոլորտը կարգավորող օրենսդրության բարեփոխման նպատակով (ոլորտի գործող օրենսդրության կատարելագործում, օրենսդրական բացերի լրացում) 2021 թ. դեկտեմբերի 23-ին Էկոնոմիկայի նախարարի և Հայաստանում ՄԱԿ արդյունաբերական զարգացման կազմակերպության (ՄԱԱԶԿ) միջև ստորագրված «Աջակցություն Հայաստանում որակի ենթակառուցվածքների

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					զարգացմանը» ծրագրային փաստաթղթի (ծրագրի ֆինանսավորումը ԵՄ-ի կողմից 4 մլն եվրո է) շրջանակներում նախատեսվում է ռազմավարության մասով աշխատանքների մեկնարկ: Շինարարության ոլորտը կարգավորող տեխնիկական կանոնակարգերի վերանայման, ինչպես նաև ներկայումս ներկրվող և արտադրվող որոշակի նոր արտադրատեսակներին ներկայացվող պահանջներով պայմանավորված՝ վերանայվել է բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը, որում կատարված փոփոխությունները հաստատվել են ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի N 607-Ն որոշմամբ: Իրականացվել են նաև մի շարք աշխատանքներ, մասնավորապես. • «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով և «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների և գործող նորմատիվ իրավական ակտերի

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					անհամապատասխանությունները վերացնելու նպատակով ՀՀ կառավարության 22.04.2021 թ N 634-Ն որոշմամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը: • Տեխնիկական կանոնակարգման ոլորտում առկա նույնական արտադրանքի համար զուգահեռաբար գործող և ազգային, և ԵԱՏՄ մակարդակներում սահմանված տարբեր պահանջները բացառելու նպատակով մշակվել է Հայաստանի Հանրապետության կառավարության ոչ պարենային արտադրանքի տեխնիկական կանոնակարգման ոլորտի մի շարք իրավական ակտեր ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը հաստատվել է 2022 թվականի հունվարի 13-ի N 27 որոշմամբ: • ԵԱՏՄ գործող տեխնիկական կանոնակարգերի վերանայման և նոր

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					մշակվող տեխնիկական կանոնակարգերի մշակմանը մասնակցություն • ԵԱՏՀ Խորհրդի կողմից ընդունված բոլոր տեխնիկական կանոնակարգերը ՀՀ-ում գործողության մեջ դնելու գործընթացի ապահովման նպատակով համապատասխան նորմատիվ իրավական ակտերի փաթեթը սահմանված կարգով ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ դրանց թարգմանության և հրապարակման համար: • Էկոնոմիկայի նախարարության համապատասխան մասնագետների կողմից ապահովվել է. - նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի նախագծերի, մասնավորապես, մետրոպոլիտենի, քիմիական արտադրանքի, տրամվայների, լաքերի և ներկերի, սինթետիկ լվացող միջոցների անվտանգության միասնական պարտադիր պահանջներ սահմանող, ինչպես նաև էլեկտրոնային առևտրի, թվային

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					տեխնիկական կանոնակարգման իրավական ակտերի մշակմանը մասնակցություն; - ընդունված (գործող) տեխնիկական կանոնակարգերում, մասնավորապես, սննդամթերքի անվտանգության, սննդամթերքի մակնշման, մսի և մսամթերքի, օծանելիքակոսմետիկական արտադրանքի, ձկան և ձկնամթերքի, ալկոհոլային արտադրանքի, բուրավետիչների, երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի, խաղալիքների, պարարտանյութերի, պայթունավտանգ միջավայրում աշխատող սարքավորումների, ավելցուկային ճնշման տակ աշխատող սարքավորումների, հրդեհային անվտանգության արտադրանքի, թեթև արդյունաբերության արտադրանքի, մանկական խաղահրապարակների անվտանգության, պահանջներ սահմանող տեխնիկական կանոնակարգերում 39 փոփոխությունների իրականացմանը մասնակցություն; - 36 պարենային և ոչ պարենային տեխնիկական կանոնակարգերի կիրարկումն

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					ապահովող ստանդարտների և մեթոդների համապատասխան ցանկերի, ստանդարտների մշակման ծրագրերի, մաքսային հայտարարագրման ժամանակ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագրերի ցանկերի մշակման և դրանցում համապատասխան փոփոխությունների կատարմանը մասնակցություն; -Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2018 թվականի ապրիլի 18-ի «Համապատասխանության գնահատման տիպային ընթացակարգերի մասին» N 44 որոշման դրույթներին համապատասխանեցնելու նպատակով ԵԱՏՄ մի շարք տեխնիկական կանոնակարգերում համապատասխանության գնահատման ընթացակարգերի վերանայմանը և փոփոխությունների իրականացմանը մասնակցություն; -ԵԱՏՄ է ներկայացվել Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված նիկոտին պարունակող արտադրանքի ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի նախագիծը,

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					ձևավորվել է աշխատանքային խումբ, ԵԱՏՄ անդամ-պետությունների լիազորված մարմինների առաջարկությունների ներքո լրամշակվել է նախագիծը, աշխատանքային խմբի անդամների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա այն կրկին լրամշակվել է, անց է կացվել խորհրդակցություն, կազմվել է արձանագրություն և ամբողջ փաթեթը ներկայացվել է ԵՏՀ՝ Խորհրդատվական կոմիտեի նիստում հանրային քննարկման ներկայացնելու համար որոշում ընդունելու նպատակով: –Կառավարության 2021 թվականի ապրիլի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-Ի N 56-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի N 1170-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 565-Ն որոշմամբ սահմանվել են համապատասխանության գնահատման սերտիֆիկացման ընթացակարգերը, քանի որ Կառավարության 2014 թվականի հունվարի

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					16-ի N 56-Ն որոշմամբ սահմանվում էին միայն համապատասխանության գնահատման հայտարարագրման ընթացակարգերը: –«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 10-ի N 1136-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակում և շրջանառություն: Ընդունվել է Կառավարության 2021 թ. հունիսի 3-ի N 902-Ն որոշմամբ: –Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 10-ի «Ցեմենտներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1136-Ն որոշման տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի շուկայահանման գործընթացի հստակեցմամբ, ցեմենտ արտադրանքի հիմք հանդիսացող պորտլանդցեմենտային կլինկեր արտադրանքը տեխնիկական կանոնակարգման օբյեկտ դիտարկելու և վերջինիս նկատմամբ պահանջների

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					սահմանման անհրաժեշտությամբ: Նախագծի մշակումը պայմանավորված է նաև շուկայում օրենսդրության խախտմամբ հայտնված, անկառավարելի և հնարավոր սպառնալիք ներկայացնող շինարարական արտադրանքի, մասնավորապես՝ ցեմենտների և պորտլանդցեմենտային կլինկերի օգտագործումը կանխելու, ինչպես նաև պետության և սպառողների շահերը և անվտանգությունն ապահովելու նպատակով: –Հավատարմագրման գործընթացի էլեկտրոնային համակարգը ամբողջությամբ մշակվել է և 2022 թվականի 1-ին եռամսյակում կիրականացվի նշյալ էլեկտրոնային համակարգի պիլոտային գործարկումը:
3.1.6	Իրականացնել թիրախային շուկաներում ընտրված ապրանքների/ծառայությունների պահանջարկի վերլուծություններ և ապահովել դրանցում տեղ գտած բիզնես հնարավորությունների ներկայացումը ՓՄՁ համայնքին	Վերլուծություն-ների առկայություն	ԷՆ	Մարտ 2022	Պատերազմով պայմանավորված կատարման ժամկետները խախտվել են: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ միջոցառման կատարման ուղղությամբ:
3.2	**Արտաքին շուկաներում ՓՄՁ-ների տեսանելիության բարձրացում՝ առևտրի և ներդրումների խթանման նպատակով**				

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
3.2.1	Խթանել cosme և ԵԱՏՄ առևտրային համակարգերի կիրառությունը ՓՄՁ-ները շրջանում իրազեկվածության բարձրացման եղանակով	Իրազեկման գործողություններ	ԷՆ	Շարունակական	Կետի կատարումը իրականացվում է Էկոնոմիկայի նախարարության աշխատանքների համատեքստում:
3.2.2	Միջազգային առևտրային հարթակներում ՓՄՁ-ների ներկայացվածության տեխնիկական աջակցություն		ԷՆ	Շարունակական	Կետի կատարումը իրականացվում է Էկոնոմիկայի նախարարության աշխատանքների համատեքստում:
3.2.3	Արտահանմանը միտված բիզնեսների թվայնացման տեխնիկական օժանդակություն	Թվային լուծումների կիրառմամբ գործող ՓՄՁ-ների թիվ	ԷՆ, ԲՏԱՆ	Դեկտեմբեր 2021	Իրականացվել են աշխատանքներ Հայաստանի 2021-2025թթ. թվայնացման ռազմավարության «Թվային տնտեսություն» բաղադրիչի մշակման ուղղությամբ: Սկզբնական փուլում մեր նպատակն է կենտրոնանալ ՓՄՁ հատվածների վրա այն ոլորտներում, որոնք զգալի ներդրում են կատարում ազգային ՀՆԱ-ում: Ռազմավարությամբ՝ 2021-2025 թվականների ազգային թվային ռազմավարական հիմնական ուղղությունները ներառում են. • Թվային կառավարություն՝ ուղղված է հանրային կառավարման մարմինների

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					կողմից կարգավորվող ծառայությունների թվայնացման, ինչպես նաև թվային նույնականացման և էլեկտրոնային ստորագրության ներդրմանը. • Թվային տնտեսություն՝ ուղղված է թվային հարթակների և լուծումների ներդրման միջոցով մասնավոր հատվածի արտադրողականության և մրցունակության բարձրացմանը. • Թվային հասարակություն. ուղղված է ընդհանուր բնակչության շրջանում թվային հմտությունների տարածման, կիբեռանվտանգության հարցերով կրթության ապահովման և սերունդների միջև թվային բացը հաղթահարմանը: Իրականացվում են նաև աշխատանքներ ոլորտային ճանապարհային քարտեզի մշակման ուղղությամբ՝ օգնելու ՓՄՁ-ներին այդ ոլորտներում ավտոմատացնելու իրենց գործողությունները (back-office and front-office operations): Սա ներառում է. 1. Ձեռնարկությունների ռեսուրսների պլանավորման համակարգերի օգտագործումը և ինտեգրումը:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					2. Տվյալների կառավարումը և բիզնես վերլուծության ու տվյալների հիման վրա որոշումների կայացման հնարավորությունները: Նշվածի մասով աշխատանքները շարունակվում են:
3.2.4	Տեղական արտադրանքի միասնական բրենդի մշակում և առաջխաղացում արտերկրում /պիլոտ/	Ապրանքների պիլոտ արտահանում	ԷՆ	Սեպտեմբեր 2021	Մշակվել է հայեցակարգային մոտեցումներ, որոնց համաձայն, ՆՁԱԿ վերակազմավորման միջոցով կիրականացվեն աշխատանքներ ՀՀ-ում գործող գիտահետազոտական խմբերի գյուտերի և տեխնոլոգիաների առևտրայնացման և դրանք ապրանքների ու ծառայությունների վերածելու ուղղությամբ, ինչը կապահովի նոր աշխատատեղերի ու գիտանորարարական կազմակերպությունների ստեղծումը՝ դարձնելով ՀՀ-ն միջազգային շուկայում առավել մրցունակ:Նշվածի շրջանակում նախատեսվում է մինչև 10 գյուտի առևտրայնացում կամ տեղայնացում:
3.3 **Թիրախային շուկաների պահանջների համապատասխանեցման գործընթացի տեխնիկական աջակցություն**					

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
3.3.1	Անցկացնել համապարփակ վերլուծություն ՓՄՁ տեսանկյունից արտահանման բարձր ներուժ ունեցող ոլորտների բացահայտման նպատակով	Վերլուծության ներկայացում	ԷՆ	Սեպտեմբեր 2021	Իրականացվել են ՀՀ արտահանման ռազմավարության և կից ճանապարհային քարտեզի մշակման և իրագործման աշխատանքներ: ՀՀ արտահանման ռազմավարության մշակման նպատակով ուսումնասիրվել են տարբեր երկրների ռազմավարությունները՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Շվեդիա, Ռուսաստանի Դաշնություն, ինչպես նաև 2011թ. դեկտեմբերի 15-ի նիստի N49 ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հաստատված արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը: Անց են կացվել աշխատանքային քննարկումներ: Ձևավորվել է մոտեցում՝ ռազմավարության հիմնական դրույթների վերաբերյալ: Ռազմավարության հաստատման դեպքում կվերհանվեն արտահանման խոչընդոտող գործոնները, մշակված ճանապարհային քարտեզի համաձայն՝ քայլեր կձեռնարկվեն դրանց նվազեցման կամ չեզոքացման ուղղությամբ՝ ինչն իր հերթին կբերի արտահանման ծավալների ավելացմանը:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
3.3.2	Բացահայտել արտադրանքի համար պոտենցիալ շուկաներ մուտքի հետ կապված առկա խոչընդոտները և աջակցել հավաստագրերի ստացմանը:		ԷՆ	Շարունակական	Կետի կատարումը իրականացվում է Էկոնոմիկայի նախարարության աշխատանքների համատեքստում
3.3.3	Պատրաստել արտահանման ներուժ ունեցող ոլորտային վերլուծական նյութեր, որտեղ ամփոփված կլինեն տվյալ ոլորտում արտադրանքի պահանջարկ ունեցող երկրների որակի չափանիշների և արտաքին առևտրի վերաբերյալ տեղեկություններ	Տվյալների հրապարակում կայքում	ԷՆ	Մայիս 2021	Շարունակվել են Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերության պետական աջակցության 2021-2026 թթ. միջոցառումների իրականացման աշխատանքները, մասնավորապես արտահանմանն ուղղված պետական աջակցության տրամադրում, մասնավորապես ցուցահանդեսների կազմակերպման, տեղական արտադրանքի առաջմղման և ճանաչելիության բարձրացում, պոտենցիալ գնորդների և դիստրիբյուտորների ներգրավում և այլն:
3.4 **Լոգիստիկ/պահեստային տնտեսությունների կայացում**					
3.4.1	Լոգիստիկ կենտրոնների հիմնում	Քանակ	ԷՆ	Հունիս 2021	«Dalberg» խորհրդատվական ընկերության փորձագետների և Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					մեծածախ շուկայի Հայաստանի համար նախընտրելի մոդելի հիման վրա կատարվել է «Ժամանակակից մեծածախ շուկան Հայաստանում» վերլուծությունը: Բացի այդ ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 4-ի N 472-Լ որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն մեկնարկող և հավաքագրվող հանրային ներդրումային ծրագրերի նախագծերում ներառելու նպատակով մշակվել և ներկայացվել է «Ժամանակակից լոգիստիկ կենտրոն Հայաստանում» ներդրումային ծրագրի նախագիծը: Մեծածախ շուկայի կամ լոգիստիկ կենտրոնի ստեղծման համար հողի ձեռքբերման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2022թ. չորրորդ եռամսյակում: ԳԴՀ մայրաքաղաք Բեռլինում ստեղծվել է մեկ հավաքական պահեստ և Եվրոպայում հայկական գինիների առցանց վաճառքի հարթակ, որը հասանելի է https://winesofarmenia.store/ կայքով: Բացի այդ, հարթակի առաջմղման և ճանաչելիության բարձրացման նպատակով նախատեսվում է իրականացնել սոցիալական մեդիա արշավներ:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
3.5 **Էլեկտրոնային առևտրի զարգացման համար նպաստավոր միջավայրի ձևավորում**					
3.5.1	Առցանց առևտրի ոլորտում օրենսդրական ակտերի վերլուծություն և բացերի վերացում		ԷՆ	Սեպտեմբեր 2021	Պատերազմով պայմանավորված կատարման ժամկետները խախտվել են: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ միջոցառման կատարման ուղղությամբ:
3.5.2	Ապահովել միջազգային առցանց վճարային համակարգերիտր հասանելիությունը (օր.՝ PayPal)		ԿԲ, ԷՆ, ԲՏԱՆ, ԱԳՆ	Հունիս 2022	Տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում ՀՀ-ում ԱՄՆ դեսպանի հետ: PayPal կողմից մեր տարածաշրջանում գործունեության ծավալման մասով հետաքրքրվածությունը բացակայում է: Ներկայումս ՀՀ կենտրոնական բանկի կողմից աշխատանքներ են տարվում այլ միջազգային վճարային համակարգերի ներգրավման ուղղությամբ:
3.5.3	Գործարկել ծագման հավաստագրի էլեկտրոնային համակարգ, որտեղ հնարավոր է լինելու առցանց դիմել հավաստագրի համար և ստանալ այն մեկօրյա ժամկետում	Համակարգի սահուն աշխատանք	ԷՆ	Սեպտեմբեր 2021	Ստեղծվել է ապրանքի ծագման երկրի հավաստագրի տրամադրման էլեկտրոնային համակարգ: Այցելելով https://e-certificate.am/, ընկերությունները կարող են ԱԱՊ առցանց համակարգում գրանցել իրենց ընկերությունը: Համակարգը հնարավորություն է տալիս,

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					առանց ԱԱՊ այցելության, դիմել և ստանալ ապրանքի ծագման երկրի հավաստագիր: Վերջինս էականորեն պարզեցնում է հավաստագրերի տրամադրման գործընթացը և նպաստում արտահանողների ծախսերի նվազեցմանը:
3.5.4	Ուսումնասիրել փոստային միջազգային առաքումների շուկան և դուրս բերել ՓՄՁ-ի արտահանման համար առկա խնդիրները	Խնդիրների ցանկ	ԷՆ, ԲՏԱՆ	Փետրվար 2021	Փոխվարչապետին կից ՓՄՁ զարգացման խորհրդի շրջանակներում Գործարարության աջակցման գրասենյակի աջակցությամբ ուսումնասիրվել, ներկայացվել է Փոխվարչապետի մոտ 2021 թվականի փետրվարի 19-ին ժամը 14:00-ին կայացած՝ ՓՄՁ զարգացման խորհրդի տասնութերորդ նիստի ժամանակ և վերջինիս հետ կապված ձևավորվել են համապատասխան հանձնարարականներ:
3.5.6	Տեխնիկական աջակցություն միջազգային առևտրի հարթակներում ներկայացվելու համար		ԷՆ	Շարունակական	https://mineconomy.am/media/17545/apranqneri%20artahanum.pdf https://mineconomy.am/media/17544/tsagman%20erkri%20havastagir.pdf 5
3.5.7	Մարզերում գործող ՓՄՁ-ների արտադրանքի հանրապետության տարածքում էլեկտրոնային վաճառքի ներուժի բացահայտում, խթանման ծրագրի մշակում	Ծրագրի առկայություն	ԷՆ	Մարտ 2021	Պատերազմով պայմանավորված կատարման ժամկետները խախտվել են: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ միջոցառման կատարման ուղղությամբ:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
3.6 **Խթանել ՓՄՁ-ների մասնակցությունը պետական գնումներին**					
3.6.2	Մշակել բարեփոխումների փաթեթ	Փաթեթի առկայություն	ԷՆ,	Հունիս 2021	Բարեփոխվել է պետական գնումների գործընթացը: Մասնավորապես՝ բարձրացվել է բանկային երաշխիքի պահանջի շեմը և իջեցվեց երաշխիքի չափը՝ սահմանելով տարբերակված չափեր՝ ըստ շեմերի:Բարեփոխումն էական քայլ էր պետական գնումներին հատկապես ՓՄՁ-ների մասնակցությունը խրախուսելու տեսանկյունից:
3.7 **Նպաստել ՓՄՁ-ների ինտեգրմանը խոշոր ձեռնարկությունների արժեշղթայում**					

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
3.7.3	Հարկային քաղաքականության միջոցով կարգավորել ԱԱՀ դաշտում աշխատող և շրջանառության հարկով աշխատող ձեռնարկությունների համագործակցության հնարավորությունը		ԷՆ	Դեկտեմբեր 2021	Էկոնոմիկայի նախարարությունը՝ Գործարարության աջակցման գրասենյակի համագործակցությամբ 2021 թվականի մարտ ամսից սկսած ՀՀ պետական եկամուտների, խոշոր առևտրային ցանցերի, ինչպես նաև ՓՄՁ սուբյեկտ հանդիսացող մատակարարների հետ բազմակողմանի քննարկումներ է կազմակերպել նախարարությունում՝ մատակարարումների դիմաց վճարումների, տեղական արտադրանքի իրացման, հարկման այլընտրանքային համակարգերում գործող մատակարարների հետ համագործակցության մասով առկա խնդիրները վերհանելու և լուծումներ առաջադրելու ուղղությամբ Նշված օրակարգը քննարկվել է նաև Փոխվարչապետին կից ՓՄՁ զարգացման խորհրդի շրջանակներում (հղումներ՝ https://mineconomy.am/news/2220, https://mineconomy.am/news/2234, https://mineconomy.am/news/2264)
4 ՓՄՁ զարգացման համար ինստիտուցիոնալ և իրավական բարենպաստ միջավայրի ապահովում					**95**
4.1 **Մասնավոր-պետություն երկխոսության մեխանիզմների կայացում և կիրառություն**					

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
4.1.2	Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի շուրջ կլոր սեղան-քննարկումների, հարցումների և հանրային քննարկումների կազմակերպում		ԷՆ	Շարունակական	Փոխվարչապետին կիից ՓՄՁ զարգացման խորհրդի շրջանակներում իրականացվում են շարունակական աշխատանքներ միջոցառման ուղղությամբ, մասնավորապես 2021 թվականին կայացել է ՓՄՁ զարգացման խորհրդի 5 նիստ (http://www.bso.am/am/%D5%93%D5%84%D5%81-%D4%BD%D5%B8%D6%80%D5%B0%D5%B8%D6%82%D6%80%D5%A4/%D5%86%D5%AB%D5%BD%D5%BF%D5%A5%D6%80-%D5%A1%D6%80%D5%B1%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80):
4.1.4	Բիզնես անդամակցության վրա հիմնված կազմակերպությունների քարտեզագրում և հաղորդակցության արդյունավետ և առավել թիրախավորված մեխանիզմի մշակում	Մեխանիզմի նկարագրություն	ԷՆ	Հունիս 2021	Պատերազմով պայմանավորված տնտեսական որոշ գործընթացների և իրականացվող ծրագրերի շարունակականության հետ կապված հարցերը՝ տնտեսական նոր իրողությունների պայմաններում ֆինանսաբյուջետային միջոցների մոբիլիզացման և առաջնայությունների վերաձևակերպման հնարավոր կարիքի առաջացման տեսանկյունից անորոշ էին ինչի պատճառով

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					խաթարվեց որոշ միջոցառումների իրականացման ժամկետները: Նշված մասով ներկայումս նախարարության կողմից իրականացվում են աշխատանքներ, միջոցառումների արդիականացման և/կամ ըստ անհրաժեշտության վերաձևակերպման ուղղությամբ՝ հնարավոր ֆորս–մաժորային իրավիճակների առաջացման դեպքերում հաղթահարման բաղադրիչների առկայությունը և ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրին ուղղություններին համապատասխանությունը ապահովելու նպատակով:
4.1.5	Բիզնես անդամակցության վրա հիմնված կազմակերպությունների /ասոցիացիաների կարողությունների զարգացում	Ասոցիացիաների քանակ	ԷՆ	Դեկտեմբեր 2021	Պատերազմով պայմանավորված կատարման ժամկետները խախտվել են: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ միջոցառման կատարման ուղղությամբ:
4.2 **Պետական աջակցության կառույցների կարողությունների զարգացում և նրանց գործունեության արդյունավետության և թափանցիկության բարձրացում՝ կորպորատիվ կառավարման, հաշվետվողականության մեխանիզմների ներդրմամբ**					
4.2.2	Իրականացնել պետական աջակցության կառույցի հանրության հետ հաղորդակցման/իրազեկման ծրագիր	Ծածկույթ	ԷՆ	Շարունակական	Սույն մասով Էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվում են շարունակական աշխատանքներ:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
4.2.3	Մշակել և ներդնել ՓՄՁ աջակցության կառույցի գործունեության կորպորատիվ կառավարման սկզբունքներին համապատասխան մշտադիտարկման, գնահատման և հաշվետվողականության համակարգ	Համակարգի պիլոտ	ԷՆ	Հունիս 2021	Պատերազմով պայմանավորված կատարման ժամկետները խախտվել են: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ միջոցառման կատարման ուղղությամբ:
4.2.5	ՓՄՁ աջակցություն իրականացնող մասնավոր նախաձեռնությունների քարտեզագրում և պետական աջակցության իրականացում տեղեկատվության տարածման, վերլուծական նյութերի տրամադրման և այլ գործիքների միջոցով	Մասնավորների քարտեզագրում	ԷՆ	Շարունակական	Պատերազմով պայմանավորված տնտեսական որոշ գործընթացների և իրականացվող ծրագրերի շարունակականության հետ կապված հարցերը՝ տնտեսական նոր իրողությունների պայմաններում ֆինանսաբյուջետային միջոցների մոբիլիզացման և առաջնայությունների վերաձևակերպման հնարավոր կարիքի առաջացման տեսանկյունից անորոշ էին ինչի պատճառով խաթարվեց որոշ միջոցառումների իրականացման ժամկետները: Նշվածի մասով ներկայումս նախարարության կողմից իրականացվում են աշխատանքներ, միջոցառումների արդիականացման և/կամ ըստ անհրաժեշտության վերաձևակերպման ուղղությամբ՝ հնարավոր ֆորս–մաժորային

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					իրավիճակների առաջացման դեպքերում հաղթահարման բաղադրիչների առկայությունը և ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրին ուղղություններին համապատասխանությունը ապահովելու նպատակով:
4.2.6	Ստեղծել ՓՄՁ-ին առնչվող տեղեկատվության, առցանց գործիքների, տվյալների շտեմարանների, կրթական ռեսուրսների և վերլուծական նյութերի ներկայացման համար նախատեսված առցանց հարթակ	Հարթակում նյութերի ակտիվ կիրառություն, գոհունակությա ն աստիճան	ԷՆ	Դեկտեմբեր 2021	Պատերազմով պայմանավորված տնտեսական որոշ գործընթացների և իրականացվող ծրագրերի շարունակականության հետ կապված հարցերը՝ տնտեսական նոր իրողությունների պայմաններում ֆինանսաբյուջետային միջոցների մոբիլիզացման և առաջնայությունների վերաձևակերպման հնարավոր կարիքի առաջացման տեսանկյունից անորոշ էին ինչի պատճառով խաթարվեց որոշ միջոցառումների իրականացման ժամկետները: Նշվածի մասով ներկայումս նախարարության կողմից իրականացվում են աշխատանքներ, միջոցառումների արդիականացման և/կամ ըստ անհրաժեշտության վերաձևակերպման ուղղությամբ՝ հնարավոր ֆորս–մաժորային

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					իրավիճակների առաջացման դեպքերում հաղթահարման բաղադրիչների առկայությունը և ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրին ուղղություններին համապատասխանությունը ապահովելու նպատակով:
4.2.7	Իրականացնել ՓՄՁ աջակցության ծրագրեր իրականացնող մարզային կառույցների կարողությունների գնահատում և դրա հիման վրա կազմակերպել անհրաժեշտ դասընթացներ	Գնահատման արդյունքներ Դասընթացներ ի քանակ	ԷՆ	Շարունակ ական	Միջոցառումը չի կատարվել 2020 թվականի ընթացքում ՆԱԿ հիմանդրամի վերափոխման ծրագրի շրջանակներում մարզային կառույցները լուծարելու պատճառով:
4.2.8	Մարզային կառույցների համար սահմանել կատարողականի թիրախային ցուցանիշներ և ապահովել դրանց մշտադիտարկման և գնահատման գործընթացի շարունակականությունը		ԷՆ	Դեկտեմբեր 2021	Միջոցառումը չի կատարվել 2020 թվականի ընթացքում ՆԱԿ հիմանդրամի վերափոխման ծրագրի շրջանակներում մարզային կառույցները լուծարելու պատճառով:
4.2.9	Մտավոր սեփականության պահպանության ազգային համակարգի արդյունավետության խթանման մեխանիզմի մշակում	Մշակված ռազմավա-ության նախագիծ	ԷՆ	Մայիս 2021	Էկոնոմիկայի նախարարության կողմից աշխատանքներ են իրականացվել մտավոր սեփականության իրավունքների, մասնավորապես հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների հուսալի և

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					արդյունավետ պաշտպանության ապահովմանը, ինչը ենթադրում է համապատասխան օրենսդրության հստակեցում և իրավակիրարկման ոլորտի խնդիրների վերացում: Մյուս կողմից իրականացվող քաղաքականությունը ենթադրում է, որ այդ իրավունքների տրամադրումն ու կիրարկումը պետք է համապատասխանի նաև հանրության շահերին և բացառի չարաշահման հնարավորությունները: Այս համատեքստում. • Մշակվել և Կառավարության քննարկմանն են ներկայացվել «Գյուտի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող գյուտերի գաղտնիության աստիճանի որոշման, դրանց օգտագործման և դրանց մասին տեղեկությունների հրապարակման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը, որոնց ընդունումը պայմանավորված է «Արտոնագրերի մասին»

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					օրենքի ընդունմամբ: Օրենքը ընդունվել է 2021թ. մարտի 3-ին (ՀՕ-108-Ն): • Մշակվել և Կառավարության քննարկմանն է ներկայացվել Արդյունաբերական դիզայնի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունումը պայմանավորված է «Արդյունաբերական դիզայնի մասին» օրենքի ընդունմամբ: Օրենքը ընդունվել է 2021թ. մարտի 3-ին (ՀՕ-109-Ն): • Մշակվել և Կառավարության քննարկմանն է ներկայացվել «ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի 1501-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի մշակումը պայմանավորված է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ: «Արտոնագրերի մասին», «Արդյունաբերական դիզայնի մասին» նոր օրենքների ընդունմամբ անհրաժեշտություն է առաջացել ուժը

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					կորցրած ճանաչել 2012 թվականի նոյեմբերի 8-ի 1501-Ն որոշումը և համապատասխանաբար մշակվել է նոր նախագիծ: Նախագիծը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն, ներկայումս քննարկման փուլում է: Մտավոր սեփականության զարգացման ռազմավարության մշակման նպատակով նախատեսվում է ստեղծել աշխատանքային խումբ՝ համակատարող գերատեսչությունների ներկայացուցիչների ներգրավմամբ: Ռազմավարության մշակման աշխատանքները քննարկվում են նաև Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) փորձագետի հետ: Աշխատանքները ՄՍՀԿ փորձագետի հետ պայմանավորվածության համաձայն մեկնարկել են փետրվար ամսից:
4.3 **Վիճակագրության բարելավում**					
4.3.1	Հարկային գաղտնիք չպարունակող տեղեկատվության փոխանակման մեթոդի,կառուցվածքի ու բովանդակության քննարկում և համաձայնություն ՊԵԿ և ԷՆ միջև		ԷՆ, ՊԵԿ	Մարտ 2021	Պատերազմով պայմանավորված կատարման ժամկետները խախտվել են: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ միջոցառման կատարման ուղղությամբ:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
4.3.2	4.3.1 կետում համաձայնեցված տարբերակով տեղեկատվության փոխանակման համակարգի գործարկում		ԷՆ, ՊԵԿ	Հունվար 2022	Պատերազմով պայմանավորված կատարման ժամկետները խախտվել են: Ներկայումս իրականացվում են աշխատանքներ միջոցառման կատարման ուղղությամբ:
4.3.3	Վիճակագրական սահմանումների և տերմինների նույնացում՝ աղբյուրների համեմատելիություն ապահովելու համար		ԷՆ, ՊԵԿ, ՎԿ	Մարտ 2021	ՎԿ-ն, առաջնորդվելով ՓՄՁ ոլորտի **միջազգային վիճակագրական պրակտիկայում կիրառվող**, այն է՝ Եվրոստատի ու Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից ընդունված չափորոշիչներով, ՓՄՁ վիճակագրության արտադրման նպատակով կիրառում է համապատասխան մեթոդաբանություն (ընդգրկման շրջանակ, սահմանումներ, դասակարգումներ, չափորոշիչներ և այլն), ինչը զետեղված է ՎԿ-ի կողմից տարեկան պարբերականությամբ մշակվող <<Փոքր ու միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում>> վիճակագրական տեղեկագրում (այսուհետ՝ Տեղեկագիր, տե՛ս օրինակ, 2021թ.-ի Տեղեկագիրը (էջ 4-5)՝ https://armstat.am/file/article/sme__bul_2021_arm.pdf հղմամբ): Նշված մեթոդաբանությունը մշակվել և ՎԿ-ի կողմից ներդրվել է Դանիայի,

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					Լիտվայի վիճակագրական ծառայությունների ու ՏՀԶԿ-ի փորձագետների օժանդակությամբ: Ավելին, ՎԿ-ի կողմից ՓՄՁ ոլորտի վիճակագրության արտադրման նպատակով կիրառվող վերոհիշյալ մեթոդաբանության վերաբերյալ ՏՀԶԿ-ի դիքորոշումը զետեղված է <<Հայաստանի կազմակերպությունների վիճակագրական ժողովածու, 2018>> հրապարակման մասնավորապես 8-11-րդ էջերում, տե՛ս՝ https://www.oecd.org/eurasia/competitiveness-programme/eastern-partners/Compendium-Entreprise-Statistics-Armenia-2018-EN.pdf հղումը: Վերոգրյալով պայմանավորված, ՎԿ-ն առաջարկում է շահագրգիռ բոլոր մարմիններին ՓՄՁ վիճակագրության վարման նպատակով առաջնորդվել համապատասխան մեթոդաբանությամբ: Միայն սույն մոտեցումը կապահովի ՓՄՁ վիճակագրության վարման միասնականացումն ու համադրելիությունը՝ անկախ դրա վերաբերյալ տեղեկատվության հավաքման աղբյուրից:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
4.3.4	Բարելավել ՓՄՁ-ի բիզնես որոշումներին առնչվող դեմագրաֆիական և տնտեսական ցուցանիշների վիճակագրական տվյալների մատչելիությունը և որակը		ՎԿ	Մարտ 2022	ՎԿ-ն, առաջնորդվելով ՓՄՁ ոլորտի **միջազգային վիճակագրական պրակտիկայում կիրառվող**, այն է՝ Եվրոստատի ու ՏՀԶԿ-ի կողմից ընդունված չափորոշիչներով, ՓՄՁ տնտեսական ու դեմոգրաֆիական ցուցանիշները՝ համապատասխան մեթոդաբանական պարզաբանումներով՝ ներառյալ դրանց միջազգային մեթոդաբանությանը հղումները, տարեկան պարբերականությամբ **հրապարակում է ՎԿ-ի պաշտոնական կայքում՝** այդպիսով ապահովելով խնդրո առարկա տեղեկատվության հասանելիությունն ու մատչելիությունը՝ տարաբնույթ սպառողների համար: Մասնավորապես, այդ ցուցանիշներին են վերաբերում ՓՄՁ-ների քանակը, շրջանառությունը, վարձու աշխատողների թվաքանակը, միջին աշխատավարձը, ավելացված արժեքը, բիզնես-դեմոգրաֆիական ցուցանիշները (նոր ստեղծված, լուծարված/մահացած և այլն)՝ ըստ ՓՄՁ սուբյեկտների չափերի, Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ խմբ.2-ի) բաժինների և

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					ՀՀ մարզային/Երևան քաղաքի բաշխվածության (տե՛ս օրինակ 2021թ.-ի Տեղեկագրի համապատասխան բաժինները): ՓՄՁ տնտեսական ցուցանիշների բարելավման մասով ՎԿ-ն, ի լրումն նախկինում հրապարակվող ցուցանիշների, հաշվի առնելով ՏՀԶԿ-ի և այլ սպառողների կողմից ներկայացված առաջարկությունները ու պայմանավորված համապատասխան տեղեկատվական աղբյուրների առկայությամբ, սկսած 2021թ.-ից, ՓՄՁ-ի կողմից ստեղծված ավելացված արժեքի ցուցանիշը տարանջատել է նաև ըստ գերփոքր ու փոքր տնտեսվարողների (տես՝ 2021թ.- Տեղեկագրի 19-27 էջերը), ինչը նախկինում մշակվում էր միավորված խմբով (տես օրինակ. 2020թ.-ի Տեղեկագիրը՝ https://armstat.am/file/article/sme__bul_2020_arm.pdf հղմամբ): Բացի այդ, նշված հրապարակման <<ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարողների կողմից ստեղծված համախառն ավելացված արժեքը>> 7-րդ բաժնում ավելացվել են ՓՄՁ-ի կողմից ստեղծված ավելացված արժեքը, դրա

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					կառուցվածքն ըստ ոլորտների, ինչպես նաև ՀՆԱ-ում ավելացված արժեքի մասնաբաժինը նկարագրող թվով 3 նոր տեղեկատվական աղյուսակներ և 1 գծապատկեր: Ինչ վերաբերում է ՓՄՁ ցուցանիշների որակին, ապա դրա ապահովումը ՎԿ-ի կողմից իրականացվող շարունակական գործընթաց է, որի համար ՎԿ-ն մշտապես համագործակցում է վիճակագրական տեղեկատվություն ներկայացնողների (ռեսպոնդենտների) ու վարչական ռեգիստր վարող մարմինների հետ՝ ցուցանիշների ամբողջականության, արդիականության և ճշգրտության ապահովման նպատակով: Միաժամանակ, հարկ է նշել, որ ՓՄՁ վիճակագրության վարման նպատակով կիրառվող ուղղակի (վիճակագրական) և անուղղակի (վարչական, մասնավորապես՝ ՊԵԿ-ի) տեղեկատվական աղբյուրներից հավաքվող/ստացվող տեղեկատվության հարաբերակցությունը կազմում է 15 և 85 %: Հետևաբար նշված վիճակագրության որակի ապահովումը հիմնականում պայմանավորված է վարչական աղբյուրում պահվող տեղեկատվության որակով:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					Այնուամենայնիվ, ՎԿ-ն, այդ թվում նշված վիճակագրության վարման նպատակով մշտապես իրականացնում է տարբեր աղբյուրներից հավաքված/ստացված տեղեկատվության (օրինակ. Տնտեսական գործունեության տեսակներ, շրջանառություն, աշխատողների թվաքանակ և այլն) համադրումներ՝ դրանցում բացահայտված տարբերությունները պարզաբանելու և ճշգրտելու, ռեսպոնդենտներին/հարկ վճարողներին մեթոդաբանական պարզաբանումներ ներկայացնելու և այդպիսով հավաքվող/ստացվող տեղեկատվության որակը բարելավելու ուղղությամբ:
4.3.5	Ապահովել ՓՄՁ արտաքին առևտրի վիճակագրական տվյալների առկայությունը		ԷՆ, ՎԿ, ՊԵԿ	Դեկտեմբեր 2021	ՓՄՁ արտաքին առևտրի վիճակագրական տվյալների աղբյուրը բացառապես վարչական բնույթի է և այդ նպատակով արտաքին տնտեսական գործունեություն (արտաքին առևտուր) իրականացնող տնտեսավարողների մակարդակով վարչական հաշվառումների (համապատասխան նույնացուցիչներով, ՏԳՏԴ խմբ. 2-ի բաշխվածությամբ, աշխատողների միջին տարեկան

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					թվաքանակով որոշվող չափերով և այլն) իրականացումը ամբողջությամբ գտնվում է ՊԵԿ-ի իրավասությունների տիրույթում, որի կողմից խնդրո առարկա վիճակագրության մշակման ու ներդրման հնարավորության պարագայում, ՎԿ-ն, իր հերթին, պատրաստակամ է ցուցաբերել միջազգայնորեն ընդունված չափորոշիչներին համապատասխանող մեթոդաբանական օժանդակություն (այդ թվում՝ 4.3.3 կետում նշվածի մասով): Նշված վիճակագրության ներդրման և ՎԿ-ին տրամադրման պարագայում Տեղեկագիրը կհամալրվի համապատասխան նոր աղյուսակներով:
4.3.6	Ապահովել ՓՄՁ-ում նորարարության մակարդակը գնահատող ցուցանիշների առկայություն հատուկ հետազոտությունների միջոցով		ԲՏԱՆ, ՎԿ, ԷՆ	Սեպտեմբեր 2021	Հաշվի առնելով այն, որ սույն միջոցառման իրականացման նախաձեռնության առաջնահերթությունը ԲՏԱՆ-ինն է, ենթադրվում է, որ խնդրո առարկա նորարարության ցուցանիշների համակարգը, նախևառաջ, պետք է վերաբերի բարձր տեխնոլոգիաների ոլորտին: Ինչը նշանակում է, որ ԲՏԱՆ-ը նախևառաջ պետք է մշակի և հաստատի բարձր տեխնոլոգիաների ոլորտի հավաքական խմբավորումները՝ ըստ ՏԳՏԴ խմբ.2-ի: Սույն աշխատանքների

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					իրականացումը հնարավորություն կտա որոշելու նորարարություն իրականացնող տնտեսավարողների հնարավոր շրջանակը և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության պարագայում կարող են իրականացվել խնդրո առարկա հատուկ հետազոտությունները: Նշվածի համատեքստում ՎԿ-ն պատրաստակամ է ցուցաբերել մեթոդաբանական օժանդակություն ԲՏԱՆ-ին և ԷՆ-ին:
4.3.7	Ապահովել ՓՄՁ օպերատիվ վիճակագրական տվյալների առկայությունը՝ եռամսյակային և կիսամյակային հրապարակումների տեսքով		ՎԿ, ԷՆ	Սեպտեմբեր 2021	ՎԿ-ն, սկսած 2021թ.-ի մայիս ամսից, իր՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը>> տեղեկատվական ամսական զեկույցներում, եռամսյակային պարբերականությամբ հրապարակում է ՓՄՁ ոլորտի որոշ օպերատիվ վիճակագրական տվյալներ՝ համապատասխան մեթոդաբանական պարզաբանումներով՝ պայմանավորված ՓՄՁ վիճակագրության վարման առանձնահատկություններով և այդ նպատակով կիրառվող վարչական տվյալների սահմանափակությամբ/ պարբերականությամբ (օրինակ. Բացառությամբ վարձու աշխատողների թվաքանակի և աշխատավարձի

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					ցուցանիշների, ՊԵԿ-ը ՎԿ-ն համապատասխան տեղեկատվությունը ներկայացնում է միայն տարեկան պարբերականությամբ): Նշվածը ներկայացված է ՎԿ-ի հետևյալ հրապարակումներում. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-մարտ>> (343-345 էջեր), տե՛ս՝ https://armstat.am/file/article/sv_03_21a_6200.pdf հղումը, 1. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-հունիս>> (328-330 էջեր), տե՛ս՝ https://armstat.am/file/article/sv_06_21a_6200.pdf հղումը), 2. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-սեպտեմբեր>> (234-236 էջեր), տե՛ս՝ https://armstat.am/file/article/sv_09_21a_6200.pdf հղումը), 3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-դեկտեմբեր>> (300-302 էջեր), տե՛ս՝

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					https://armstat.am/file/article/sv_12_21a_6200.pdf հղումը): Համաձայն 2022թ.-ի վիճակագրական ծրագրի՝ 2022թ.-ի համապատասխան ցուցանիշները ՎԿ-ն կհրապարակի սույն թվականի մայիս ամսին՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-մարտ>> տեղեկատվական ամսական զեկույցում:
4.3.8	Ռազմավարության իրականացման և հետագա քաղաքականությունների մշակման համար կարևոր վիճակագրական տվյալների ներառում վիճակագրական պարբերական զեկույցներում		ՎԿ, ԷՆ	Սեպտեմբեր 2021	Սույն կետով սահմանված միջոցառումը թղթակցում է 4.3.7 կետով սահմանվածին: Ի լրումն վերոգրյալի, հարկ է նշել նաև, որ ՓՄՁ վիճակագրությանն առընչվող որոշ ցուցանիշներ, իրենց բնույթով, բովանդակությամբ և տեղեկատվության հավաքման/ստացման առանձնահատկություններով պայմանավորված, վարչական բնույթի են: Դրանցից են օրինակ, ՓՄՁ վարկավորման՝ ըստ վարկերի տեսակների, ՓՄՁ-ների վճարած հարկերի՝ ըստ հարկատեսակների, ՓՄՁ-ների կողմից իրականացված ներդրումների, ՓՄՁ-ներին իրականացված աջակցության տեսակների ու չափերի և այլնի վերաբերյալ ցուցանիշները: Նշվածի

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					վերաբերյալ տեղեկատվության հավաքման, մշակման գործընթացների իրականացումը գտնվում է վարչական՝ անվանական հասցեական ներգործություններ իրականացնող և դրանց արդյունքում վարչական ռեգիստրներ վարող/ձևավորող համապատասխան ոլորտի պետական կառավարման մարմինների լիազորությունների ներքո:
4.3.9	Բարելավել ՓՄՁ ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և հրապարակումը		ԿԲ, ԷՆ	Սեպտեմբեր 2021	ՀՀ կենտրոնական բանկի կողմից նախաձեռնվել է տվյալների հավաքագրումը:
4.3.10	Ոլորտային գործառնական ցուցանիշների հավաքագրման գործիքի մշակում/պիլոտային ծրագիր			Սեպտեմբեր 2021	Պատերազմական դրությամբ ստեղծված իրավիճակով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել միջոցառման բովանդակային արդիականացումը, ապահովելով դրանց ներքո նախատեսված խնդիրների լուծման առավել ընդգրկուն շրջանակ և պատերազմով պայմանավորված հիմնախնդիրների հաղթահարման բաղադրիչների առկայություն: Նշված հանգամանքներով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել վերանայել:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					Ռազմավարության գործողությունների պլանով նախատեսված մի շարք միջոցառումների կատարման ժամկետները:
4.4 **ՓՄՁ-ի աջակցության ոլորտում ծրագրեր իրականացնող դոնորների աշխատանքի համակարգում**					
4.4.2	Դոնորների համակարգման մեխանիզմի մշակում և ֆորմալացում՝ ներառյալ ծրագրերի ներկայացման, մոնիթորինգի և կազմակերպությունների գնահատման ստանդարտացված ձևաչափերի պատրաստում	Գործիքի առկայություն	ԷՆ	Մայիս 2021	Պատերազմական դրությամբ ստեղծված իրավիճակով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել միջոցառման բովանդակային արդիականացումը, ապահովելով դրանց ներքո նախատեսված խնդիրների լուծման առավել ընդգրկուն շրջանակ և պատերազմով պայմանավորված հիմնախնդիրների հաղթահարման բաղադրիչների առկայություն: Նշված հանգամանքներով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել վերանայել: Ռազմավարության գործողությունների պլանով նախատեսված մի շարք միջոցառումների կատարման ժամկետները:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
4.4.3	Գործող ծրագրերին ՓՄՁ-ների ուղղորդման մատչելի մեխանիզմի ներդրում	Կայքի հետ սինխրոնիզացիա	ԷՆ	Շարունակական	Ձեռներեցության պետական աջակցության գործիքակազմի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության՝ հանրության համար հասանելիությունը և և մատչելիությունը ապահովելու համար նշվածի վերաբերյալ համապարփակ և արագ արձագանքման ռեժիմով տեղադրվում են Էկոնոմիկայի նախարարության կայք էջում, ինչպես նաև տարածվում են սոցիալական ցանցերի միջոցով, մասնավորապես ԷՆ ֆեսբուքյան էջով և տելեգրամյան ալիքով: Միաժամանակ «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի կայք էջը բարեփոխվել է՝ ներդրվելով գործող ծրագրերին ՓՄՁ-ների ուղղորդման մատչելի մեխանիզմ՝ https://isc.am/hy/announcement:
4.5 **ՓՄՁ ազդեցության գնահատման մեխանիզմների մշակում և գործադրում**					
4.5.1	Ներդնել ֆորմալ ձևաչափ օրենսդրական նախաձեռնությունների ՓՄՁ թեստավորման ապահովման համար		ԷՆ	Շարունակական	Էկոնոմիկայի նախարարության ներքո մշակվել է պետություն-մասնավոր երկխոսության խթանման տեսլական: Տեսլականով սահմանված գործողություններն իրականացման արդյունքում նախատեսվում է առավել արդյունավետ դարձնել պետություն–մասնավոր երկխոսությունը, գործարար

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					միությունների, առավել համակարգված և արագ արձագանքել ոլորտային ասոցիացիաների և համապատասխան ձևաչափերով քննարկումներ կազմակերպել մասնավոր ընկերությունների կողմից բարձրացված խնդիրներին և այլն: Արդյունքում նախատեսվում է ակտիվորեն
4.5.2	ՓՄՁ-ին առնչվող բոլոր իրավական ակտերի ստեղծման և փոփոխությունների հետ կապված կազմակերպել հանրային լսումներ		ԷՆ	Շարունակական	4.5.1 կետի կատարման արդյունքում նախատեսվում է ակտիվորեն կիրառել պետություն-մասնավոր երկխոսության գործնական փոխհամագործակցության ընդուված երեք մոտեցումները, որոնք կզուգորդվեն՝ լրացնելով միմյանց, մասնավորապես. Ծանուցումը, որը ներառում է հանրությանը/մասնավոր հատվածին տեղեկատվության հաղորդումը՝ առաջիկայում նախատեսվող կամ նախագծման փուլում գտնվող կարգավորումների վերաբերյալ: Գործընթացը միակողմանի է, որտեղ հանրությունը/մասնավոր հատվածն ունեն պասիվ դեր: Ծանուցումն ինքնին երկխոսություն չէ, բայց կարող է հանդիսանալ երկխոսության առաջին քայլը՝ շահագրգիռ

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
					կողմերին հնարավորություն տալով իրազեկվել և նախապատրաստվել գալիք երկխոսություններին: Խորհրդատվությունը, որի անհրաժեշտությունը կարող է առաջանալ կարգավորումների տարբեր փուլերում՝ քաղաքականության գերակայությունների սահմանումից մինչև կարգավորման մշակում և գնահատում, որի նպատակն առաջարկությունների և կարծիքների հավաքագրումն է՝ ավելի բարձր որակի ռազմավարությունների և իրավական ակտերի մշակման համար, օրինակ Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am առցանց հարթակը: Երկխոսությունը/մասնակցությունը, որը մասնավոր հատվածի և շահագրգիռ բոլոր կողմերի ակտիվ ներգրավվածությունն է քաղաքականությունների, օրենսդրության և կարգավորումների մոտեցումների ձևակերպման կամ նախագծերի մշակման, քննարկման և այնուհետև իրականացման գործընթացում՝ դեմ առ դեմ քննարկումների և համատեղ աշխատանքի միջոցով:

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Կատարման ընթացք
4.6 **Հարկային/մաքսային/այլ վարչարարական բեռի գնահատում և պարզեցում ՓՄՁ-ների համար**					
4.6.1	ՓՄՁ-ի կողմից բարձրաձայնված խնդիրների օրենսդրական լուծումների մշակում		ԷՆ	Շարունակական	Էկոնոմիկայի նախարարության կողմից տարբեր հարթակների, այդ թվում նաև Փոխվարչապետին կիից ՓՄՁ զարգացման խորհրդի շրջանակներում շարունակական աշխատանքներ են իրականացվում ՓՄՁ-ի կողմից բարձրաձայնված խնդիրների վերհանման և դրանց օրենսդրական լուծումների մշակման ուղղությամբ: